


Мечт ощущ
чувств



19 JUN 2009

ՊԻԱՑԿԱՅԱ ՅԵՎ Վ. ԴԱԿՈՒԿԻՆ

ՊԱՏԻ ԼՐԱԳՐԻ ԽԱՐԿՈՂՆԵՐԸ
ԲԱՆԹՈՂԹԱԿԻՑՆԵՐԻ ԽԱԲԱՆԵՐԸ

07
2 - 56

ԵՎԱ 6 — 1928

14943

D-7

1-56

Ն. ՊԻԼԱՑԿԱՅԱ ՅԵՎ Վ. ԴԱԿՈՒԿԻՆ

ՊԱՏԻ ԼՐԱԳՐԻ ԽՄԲԿՈՒՆԵՐԸ

364

८

ԲԱՆԹՂԹԱԿԻՑՆԵՐԻ ԽՄԲԱԿՆԵՐԸ

(‘Երանց կազմակերպման լեվ աօխատանիների մասին’)

Կազմվել է «Խորհրդային Հայաստանի»
Բանվորական Բաժնի կողմանց

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆ ԱՐԱՋԱՐ ԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԹՎԵՐՆ ՎԵՐ

ՅԵՐԵՎԱՆ - 1928



ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Թղթակցական շարժումն այժմ արդեն խո-
շոր ծավալ և ստացել: Միայն «Խ. Հ.»-ի, «ԱԱԺ-
ԿԱԼ»-ի և «ԱՎԱՆԴԱՐԴ» թերթերի շուրջը հա-
մախմբված կան 3000-ից ավելի թղթակցներ:
Այդ մասսայի գաստիարակության և նրանց աշ-
խատանքների դեկապարման հարցը ներկայիս
կարևորագույն խնդիրներից մեկն եւ և մեր ա-
ռորդա պրակտիկ աշխատանքների մեջ իր ար-
ժանի տեղը պիտի գրավի:

Պիտի խոստովանվենք, վոր մինչև որս այդ
ուղղութիւնմբ քիչ բան ե արված: Թղթակցական
շարժման խնդիրների վերաբերյալ գրականու-
թիւն խպառ բացակայության և մի շարք այլ
պատճառներով հնարավոր չի լեզել վերոհիշյալ-
ների կրթության գործը լավ հիմքերի վրա զը-
նել: Այդ տեսակետից ներկա գրքուրիկի հրատա-
րակումը խոշոր նշանակություն ունի և թղթա-
կիցների կարիքների բավարարման համար ար-
ված մի մեծ քայլ է: Կառկածից վեր ե, վոր
ներկա գրքուրիկը չի կարող զգացվող բոլոր պա-
հանչներն ել լիովին բավարարել: Որինակ գըր-



Գրառեպիար № 691 թ.

4. 722 *Sperm* 1500

Պետհրատի 2-րդ տպարան Յեղիանոս - 547

քույկում զրելու ձեերի, թեմաների ընարության և այլ խնդիրների մասին վոչինչ չկա: Ել չենք խոսում թղթակցական շարժման պատմության վերաբերյալ հարցերի մասին: Բայց այնուամանայնիվ մի շարք հիմնական խնդիրներ ներկա զրբույկում հարուցվում են և ճիշտ կերպով ել պարզաբանվում: Հետագա հրատարակություններն անշուշտ, կգան լրացնելու և այն բացը, վորը ներկա գրքույկով չի ծածկվում:

Ներկա զրբույկը, «ՊՐԱՎԴԱ»-ի խմբազրության հրատարակած համանուն զրբույկի համառոտագրություն եւ Մի քանի զլուխներ, վորոնք կամ կրկնություն են յեղու և կամ թէ կարեոր չեն համարվել զուրս են զցված: Բացի այդ, կազմելու ժամանակ ևս կրճատութներ և փոփոխություններ են արվել: Փոփոխությունները հիմնականում արվել են այն ուղղությամբ, վոր զրբույկը հարմարեցված է մեր պայմաններին, որինակները վերցվել են մեր կյանքից, վորպեսզի մեր ընթերցողին ավելի մատչելի լինի:

Այժմ բան-թե զրուղթզթակցի պահանջներին և հարմարեցված զրբույկը: Չնայած, վոր փորձեր են արվել յերկու խմբի կարիքներին և ընդուածել բայց այնուամենայնիվ հիմնականում կուրոր ըանթղթակցների վրա յե վերցված: Դրա պատճառը վոչ թե այն ե, վոր իւմ-

բազրությունն անտես և արել զրուղթզթակցների կարիքները, այլ այն, վոր ձեռնարկի բնագիրն այնպես եւ կազմված յեղել, վոր հիմնովին փոխել հնարավոր չեր: Բայց և այնպես, չնայած դրան ամենայն վստահությամբ մենք ներկա գըրքույկը կարող ենք առաջարկել նաև մեր զյուղթզթակցներին վորպես ձեռնարկ:

«ԽՈՐԻՇՎԱՅԻՆ ՀԱԿԱՏԱՑԻ» ԲԱՆԲԱԺԻՆ

I.

**ԲԱՆԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ, ՊԱՏԻ ԼՐԱԳՐԵՐԻ ԽՄԲԿՈՒ-
ՆԵՐԸ ՅԵՎ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հազվագյուտ գործարանի, ֆաբրիկայի կամ
պետական մի այլ ձեռնարկության կհանդիպեք,
վորտեղ պատի թերթ և բանթղթակիցները չը
լինեն:

Շատ տեղերում բանթղթակիցներն արգեն
խմբակ կազմակերպած՝ ձեռնարկության հասա-
րակական կազմակերպություններին զուգընթաց
աշխատում են: Սակայն բանթղթակիցների խըն-
դրակը բոլորովին յուրահատուկ մի կազմակեր-
պություն եւ: Նա վոչ մի նմանություն չունի
հասարակական մյուս կազմակերպությունների
հետ. իսկ դա բացատրվում է նրանով, վոր բան-
թղթակցական աշխատանքը միանգամայն կամա-
փոր եւ և յերկրորդ՝ թղթակիցների խմբակը կազ-
մակերպվում եւ միայն պատի թերթի շուրջը:

Հիմնական այս տարբերությունից յեխնելով
պետք եւ շեշտել, վոր թղթակցական աշխատան-

քի բնագավառում զեռ կան մի շարք թերու-
թյուններ, վորոնց թղթակիցները պետք եւ հաշ-
վի առնեն: Դեռ կան դեպօեր, յերբ թղթակից-
ները խմբակի ժողովում, քննելով ձեռնարկու-
թյան վորևե կազմակերպության նախագահի զե-
կուցումը հանում են նույնիսկ բանաձեռ, կա-
տարած աշխատանքները զանելով բավարար և
առաջարկելով վերացնել նկատված թերություն-
ները: Սա ցույց է տալիս, վոր բանթղթակիցները
զեռ չեն իմանում իրենց աշխատանքի և իրա-
վունքի սահմանները: Թղթակիցների խմբակն
այնպիսի կազմակերպություններից չեն, վոր հըս-
կում եւ ձեռնարկության վորևե կազմակերպու-
թյան աշխատանքներին, հետեապես իրավունք
ել չունի այդ կազմակերպությունների գեկու-
ցումները լսած գեպօւմ վորոշումներ կայաց-
նել: Վորոշումները կարող են կատարել միայն
կոմբջիջը, գրծարկումը և այն մյուս կազմա-
կերպությունները, վորոնք դեկավարում են տե-
ղի կյանքն ու պատասխանատույեն գրահամար:

Թղթակիցների հիմնական խնդիրներն այն
են, վոր նրանք թերթի միջոցով սժանդակեն
ձեռնարկության կազմակերպություններին ի-
րենց աշխատանքի մեջ, յուսաբանելով այն բո-
լոր թերությունները, վորոնք նկատվում են:
Հետեապես անհրաժեշտ են, վոր սերտ կապ լինի

բանթղթակիցների և գործարանի կամ ֆաբրիկայի մյուս կազմակերպությունների միջև։

Յեվ յեթե այդ կապը բացակայում է, անկասկած, դրանից աշխատանքը կարող է առժել. դրա համար ել անհրաժեշտ է, վոր թղթակիցների խմբուկը և ձեռնարկության մյուս կազմակերպությունները գործեն ձեռք-ձեռքի տված և համերաշխ։

1. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԲԱՆԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

Թղթակցային աշխատանքը յուրահատուկ բնույթ ունի, բայց այդ յերբեք ել չի նշանակում թե՝ նա «բացարձակապես անկալս ե» և դեկավարության կարիք չի զգում։ Թղթակիցների մեջ կան այնպիսիները, (բարեբախտաբար դրանց թիվը շատ քիչ է), վորոնք ասում են թե՝ կուսակցությունն ուրիշ բան է, իսկ մենք ուրիշ, մենք մասսաների կոնտրոլն ենք իրականացնում, մեր աշխատանքի մեջ մենք պետք երություն անկախ լինենք։ Սա միանգանայն որ խալ և վաճանգավոր տեսակետ է։ Խնդրին նըման վերաբերունք ունենալը թղթակցական շարժման կոմմունիստական դեկավարությանը միան վնաս կարող են հանցնել։ Ամեն մի թղթակից այդ յերկութիւն դեմ խիստ պայքար պիտի

մղի, յեթե նա ուզում է բանգյուղիթղթակիցների հեղինակությունն աշխատավորական մասսաների աշքում բարձր մնա, միաժամանակ այդ շարժումը ճիշտ ճանապարհով աւարվի։

Բանգյուղիթղթակիցների յերրորդ խորհրդակցությունն առանձնապես կանգ առնելով թղթակցական շարժման կոմմունիստական դեկավարության անհրաժեշտառթյան վրա, շեշտել է, վոր «բանգյուղիթղթակիցների շարժման զարգացման ամենահիմնական և ամփոխարինելի նախապայմանը, — կոմմունիստական կուսակցության դեկավարությունն է»։

Թղթակիցների խմբակը և պատի թերթի խմբկուը գաղափարական դեկավարություն ըստանում են տեղական կոմբջիջից։ Այդ դեկավարությունը յերկու հիմնական հարց ե դնում ամեն մի կոմբջիջի առաջ, — 1) Ապահովել կուսակցական քաղաքականության կիրառումը պատի թերթում ու թղթակիցների խմբակում, 2) ստեղծել ավելի բարենպաստ պայմաններ տվյալ հիմնարկության մեջ թղթակցական աշխատանքների ծավալման համար։

Մինչև որս կոմբջիջներն այս խնդիրների լուծման՝ թղթակցական աշխատանքը դեկավարելու համար, կամ պատի թերթի խմբկուին կը ցել են մի ընկերոջ կամ ագիտ կազմակերպչին

նշանակել են պատասխանառու խմբագիր, կամ կոմքջիջի քարտուղարը խմբկոլից պահանջել եթերթում տպկելիք նյութերը և գրաքննության ցենզուրայի յենթարկել, և վերջապես, յերբեմբն ել խմբկում կամ խմբակում կազմակերպել են ֆրակցիա և այդ կերպ են ցանկացել զեկավարել: Բայց պետք ե խոստավանել, վոր զեկավարության այդ ձևերից և վոչ մեկն ել դցական արդյունքներ չի տպել:

Վերեւում մենք ասացինք, վոր թղթակցական աշխատանքները յուրահատուկ բնույթ ունեն և միանգամացն կամավոր են, հետևաբար, պետք ե առահովել թղթակիցների ինքնուրույնությունը: Բայց յերբ մենք զանազան ներկայացուցիչներ ենք նշանակում, պատի թերթը կոպիտ ձևով ցենզուրայի յենք ենթարկում, ակտիվությունն ինքն ըստ ինքան խեղզվում է: Թղթակցական կազմակերպությունը բոլորովին այլ տիպի և այլ բնույթի կազմակերպություն ե, գրա համար և նրա զեկավարությունը պետք ե կրի բոլորովին այլ բնույթ:

Թղթակիցների կազմակերպությունն, առանց միջնորդի, իր աշխատանքի բովանդակությամբ կապած և մեր կուսակցության հետ: Կուսակցության խնդիրների մեջ և մանում ոգնել թղթակիցներին հաջող աշխատելու, հսկել վոր նը-

րանք չհալածվեն բյուրոկրատների և չինովուկ-ների կողմից:

Վերջերս խոշոր վհճերի առիթ ավեց պատի թերթի խմբկոլի ընտրության խնդիրը: Միշարք ընկերներ գտնում ենին, վոր խմբկոլը պետք ե կազմված լինի ներկայացուցիչներից: «Պատի թերթը, առում ելին նրանք, պետք ե լինի կոմքջիջի և տեղկոմի որդանը, հետևապես խմբկոլը կազմվում ե կոմքջիջի և գործարկոմի ներկայացուցիչներից»: Բայց «կոմքջիջի որդան» կոչումը գեռ չի նշանակում իսկապես թերթի ղեկավարում: Մենք շատ կոմքջիջների յենք ծաղեկավարում: Մենք շատ կոմքջիջների յենք ծանոթ, վորոնք պատի թերթերով բոլորովին չեն հետաքրքրվում, սակայն թերթի ճակատին գրրված ե «կոմքջիջի որդան»:

Առանձին նշանակություն չունի «որդան» յարկիը, պետք ե աշխատել լայն շափերով մասսայական ցցնել պատի թերթը, պետք ե միջոցների զիւել ավելի շատ անկուսակցական բանագրություններ համախմբել նրա շուրջը, նպատակահարձարմար ե և կուսակցական բարձրագույն մարմինների կողմից հավանություն ե գտել, վոր պատի թերթն անվանվի վոչ թե կոմքջիջի կամ տեղեկոմի, այլ ուղղակի տվյալ ձեռնարկության բանագրությունների որդան: Ինչ վերաբերում է խմբկոլում հատուկ ներկայացուցիչ ունենալու

խնդրին, կամ պատի թերթի պատասխանառու խմբագրի նշանակմանը, պետք և հայտարարել, վոր փորձը ցույց ե տվել, վոր այդ ձեերը բոլորսին ոգտակար չեն թղթակցական աշխատանքների ծավալման համար։ Նշանակովի ներկայացուցիչը խմբկոլում իրեն համարում է կամ բացարձակ ցենզուր, կամ թե չե սրտով չի աշխատում, դրանից ել տուժում է ընդհանուր գործը։ Թղթակից բանվորների մեջ հուսալքում ե առաջանում ու նրանց յետ մղում պատի թերթից։ Այդ հանգամանքը ի նկատի ունենալով թե կուսակցությունը և թե բանգյուղթղակիցների չամամթութենական Յ-րդ խորհրդակցությունը հարմար գտան խմբկոն ընտրել թղթակիցների խրմբակում կամ ձեռնարկության ընդհանուր ժողովում, բայց դարձյալ թղթակիցներից։ Թղթակիցների խմբակին կամ խմբկոլին կից կոմֆրակցիա կազմակերպելուց պետք ե խուսափել։ Ներկա գեղքում կոմֆրակցիան թղթակցի հանդես ըերած ակտիվությունը խեղդում ե։ Առանց ֆրակցիայի շատ հեշտությամբ կոմբջիջը կարող է թղակիցների խմբակը զեկավարել։ Դրա համար հարկագոր և կուսակցական ընկերներին աշխատանքի կաչել և ունենալ որինակելի կուսակցական բանթղթակիցներ, վորոնք խմբկոլում ու խմբակի ժողովում պետք ե ակտիվ աշխատանք

կուսարեն և որինակ ծառայեն մյուսներին։ Կուսակցական թղթակիցները վոչ վորի կողմից չեն նշանակվում։ Նրանք ել անկուսակցական թղթակիցների պես կամավոր աշխատանքներ, են, թղթակցական գործը սիրողներ։ Խմբակում ու խմբկոլում կուսակցական թղթակիցները պարագագոր են առնել կոմմունիստական ճիշտ բաղաքականություն։ Անկուսակցական թղթակիցները շատ լավ են հասկանում աշխատանքի հաջողության համար կուսակցական թղթակիցների խոշոր նշանակությունը։ Կոմբջիջները պետք ե հաշվի առնեն այս հանգամանքը և կուսակցական բանթղթակիցներին ուրիշ աշխատանքներով քիչ ծանրաբեռնեն և հնարավորություն տան նրանց թղթակիցների խմբակում ու թերթի խմբկոլում ակտիվ աշխատելու և կուսակցական դիմ անցկացնելու։

Համեմատկուսի կենտկոմի 26 թվի ոգոստոսի 28 ի վորոշան համաձայն կոմբջիջները պարտավոր են իրենց աշխատանքի ծրագրի մեջ մացնել նուև թղթակիցների մեջ առավելիք աշխատանքների հարցը։ Դրա համար կոմբջիջը պետք ե աեղակ լինի թե ինչ և կատարվում թղթակիցների խմբակում։ Կուսակցական բանթղթակիցների միջոցով կոմբջիջը պետք ե ժամանակին թղթակիցների ուղղութ կոմբջիջը պետք ե ժամանակին ու թղթակիցների առաջ դնի ձեռնարկության ու

համապետական նշանակություն ունեցող հերթական հրատապ խնդիրները, դրանց մասին անհրաժեշտ բացատրակիցն առ և թղթակիցներին տեղակ պահի ձեռնարկության կամ գյուղի ընթացիկ ու հիմնական խնդիրներին, կոմքջիջի բյուրովի և կուսակցական թղթակիցների միջև պետք ե սերտ կապ լինի: Կոմքջիջի բյուրովում հաճախակի պետք ե լսել կումմունիստ թղթակիցների զեկուցումները պատի թերթի, խմբակի և առհասարակ, թղթակցական աշխատանքների մասին և անհրաժեշտ ցուցմունքներ տալ:

2. ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԲԱՆԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԳԻԾԸ ԽՄԲԿՈՒՈՒՄ ՈՒ ԽՄԲԱԿՈՒՄ

Կուսակցական թղթակիցները կուսակցության գիծը կիրառողներն են խմբկում ու թղթակիցների խմբակում: Դրանով նրանք կոմքջիջի շուրջն են հաճախմբում անկուսակցական ակտիվին ու նրան մոտեցնում են կուսակցությանը: Աստիճանաբար կուսակցության խնդիրներն ուսումնասիրելով ակտիվ թղթակիցները մտնում են կուսակցության շարքերը: Հետևակես կոմմունիստ թղթակիցների հիմնական խնդիրներից են նաև անկուսակցական ակտիվ թղթակիցներին նախապատրաստել կուսակցու-

թյան շարքերն անցնելու համար: Այդ բոլորը հնարավոր կլինի այն գեպքում, լեթե կոմմունիստ թղթակիցները չառանձնանան անկուսակցականներից, այլ նրանց հետ ձեռք-ձեռքի տված աշխատեն:

Կոմմունիստ թղթակիցները խմբակում կամ խմբկում ներկայացուցչի տոն չեն ընդունում, կամ նրանք պատվավոր հյուրեր չեն: Նրանք պետք ե հանդիսանան խմբակի գործունյա և ակտիվ անդամները, մազաչափ անգամ չդիպչելով անկուսակցական ընկերների ձեռներեցությանը ու հեղինակությանը: Խնդիրների ճիշտ ըմբռնումով և ճիշտ բացատրություններ տալով ե, վոր կոմմունիստ թղթակիցն ազգեցություն պետք ե ձեռք բերի թե խմբկում և թե խընդակում:

Այժմ այն մասին, թե ինչ կերպով և ինչպես պետք ե կոմմունիստ թղթակիցները խմբակում ու խմբկում կուսակցական գիծ անցկացնեն:

Վերցնենք մի այսպիսի որինակ: Թղթակիցների խմբակում թղթակցություններ են քննվում: Դիցուք մի քանի թղթակցություններ զրված են այն մասին, վոր պետք ե ձեռնարկության վորակալ աշխատակիցների և մասնագետների բարձր ուղին իջեցնել իսկ ցածր վորակի բիչ աշխա-

սաւացողներինը՝ բարձրացնել։ Կոմմունիստական թղթակիցները նման գեղքերում պետք են հանդես գան թղթակցությունների հեղինակներին բաց արելու՝ խնդրին նրանց ճիշտ չմոտենալն և այն, թե ինչի հիմա հնարավոր չե աշխատավարձի հավասարեցում կատարել։ Յեթե թղթակիցները տպած բացարությունից չեն բավարպում, պետք է համաձայնեցնել խմբովի հետ, խմբակի հերթական պարապմունքից մեկը նվիրել այդ խնդրին ու կոմբինատիվ կամ գործարկումից, թղթակիցների շրջանում ավելի հեղինակություն վայելող մի ընկերոջ կանչել զեկուցման;

Հարկավոր ե լնդգծել մի հանգամանք և
կոմիջից յերեք չպետք ե խառնվի կուսակցա-
կան թղթակցի անհատական աշխատանքներին:

3. ԹՂԹԱԿԻՑՆԵՐԻ ՄԵՋ ՔԱՂԴԱՍԻԿԱՐԱԿՈՎԱ-
ԿԱՆ ԱԾԽԱՏԱՆՔՆԵՐԸ պետք կատարվեն՝ ու)
թղթակիցների խմբակում, 2) ձեռնարկության
կից չեղած դասընթացներում ու խմբակներում
և 3) ապագիր թերթերի խմբագրությունների
միջացու:

Խմբակի ժողովներում հաճախակի պետք է
դեկույտներ զնել խորհրդակին շինտրաբության
ու նրա նվաճումների և կուսակցության քաղա-

բականության մասին։ Կոմքջիջը պետք է խրմ-
բակը զեկուցողներով ապահովի։ Կոմքջիջները և
կուսակցական թղթակիցները պետք ե աշխա-
տեն անկուսակցական թղթակիցներին ավտո-
ձեռնարկության կամ շրջանի լենինիզմի և քաղ-
պրագիտության խմբակներում առաջին հերթին
տեղափորել։ Բացի այդ, կոմքջիջը պետք է հար-
մարություններ ստեղծի թղթակիցների համար,
արտադրական ու այլ խորհրդակցություններին
հաճախելու, վորը պակաս դաստիարակչական
նշանակություն չունի։

4. ԽՄԲԿՈՒԾ ՅԵՎ ԿՈՄԲԶԻՉԸ

Պատի թերթերը թե կուսակցական և թե
խորհրդավին որպանների կողմից ցեղազուրալի
(զբաննության) լենթական չեն: Թերթի բովան-
դակության ու խմբակի աշխատանքների համար
պատասխանատու յե խմբագրական կողեգիան,
փորն ընտրվում ե թղթակիցների ժողովում: Վոչ
վոք իրավունք չունի խմբկողից թղթակիցների
ցուցակ, պարագմոնիրի որպես, կամ այլ բա-
ցատրություն պահանջելու: Թղթակիցի անուն,
ազգանունը խմբկողը կարող ե հայտնիլ միայն զա-
տակական, բանկյուղական կամ որպաններին հայց-
այս գեռ չի նշանակվում գումարական խմբկողը բան-



վորական ընդհանուր ժողովներում ու կոմբջիջի նիստերին չպետք է իր աշխատանքների մասին զեկուցումներ անի: Ընդհակառակը, խմբկոլը հաճախակի զեկուցումներ պիտի անի բանվորական ժողովներում, նրանց հետ կատարելու, նոր թղթակիցներ առաջ քաշելու և անհրաժեշտ ցուցումներ ստանալու համար:

Պատի թերթի խմբկոլը նախ պետք է աշխատի մոտ հարաբերությունների մեջ լինել կոմբջիջի հետ, նրա ուշադրությունը գրավել թղթակիցների աշխատանքի վրա, խորհուրդներ ստանալ նրանից ու կոմբջիջի ձեռնահաս անդամներին հրավիրել խմբակում զրուցի ձևով գասախոսություններ կարդալու: Խմբկոլը պետք է կոմբջիջի միջոցով կուսակցական թղթակիցներին ազատի ծանրաբեռնվածությունից ու նրանց ոգտագործի պատի թերթում: Խմբկոլը թերթի միջոցով ամեն կերպ պետք է ոգնի կոմբջին ձեռնարկության մեջ զանազան կամպանիաներ անցկացնելու, կոմբջիջի շուրջն անկուսակցական ակտիվ համախմբելու և կոմբջիջի ուժերով նրանց քաղաքականապես դաստիարակելու:

Յ. ինչպես Պետք է լինեն ԳՈՐԾ-ՖԱԲ-ԿԱՄՆԵՐԻ ՅԵՎ. ԲԱՆԹՂԹԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՐԱ-ԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

Բանթղթակիցների և տեղական պրոֆորդանների փոխհարաբերությունները պետք է լինեն կոմբջիջների և բանթղթակիցների միջև յեզած հարաբերությունների նման: Այսուեղ ևս պետք է ստեղծել սերտ կապ, ընկերական փոխհարաբերությունն և վատահությունն:

Նկատվել են, վոր տեղկոմները շատ քիչ են ոգնում թղթակիցներին (պատի թերթի հրատարակմանը նյութապես քիչ են ոգնում, թղթակցություններին չեն պատասխանում, զեկուցումները չեն տալիս և այլն): Տեղկոմները բանթղթակցի հալածման գեպքում կամ չեզոք գիրք են բըռնում, կամ անցնում են տնտեսավարների կողմը և վերջապես, տեղկոմները հաճախ պահանջ են գնում, վոր թղթակիցներն ու խմբակը յենթարկվեն իրենց:

Նման յերեսութները վատ են անդրադառնում բանթղթակիցների աշխատանքների վրա և պետք է, ինչպես ել լինի, արմատախիլ անել: Պատի թերթի խմբկոլը և թղթակիցների խմբակը կոմբջիջի միջոցով պետք է ընկերական փոխհարաբերություններ ստեղծեն ահեղծեն:

Վորոնիք են արդ վասխարաբերությունները: Ինչ աջակցաթյուն կարող ե ցուց տալ զործարկոմը թղթակիցներին: Գործարկոմը պետք է թղթակիցներին ցուց տա թե՛ ավյալ անսուժինչ ինդիբրների մասին կարելի յէ զըել պատի թերթում և առհասարակ մամուլում: Ավելի լավ կլինի այդ անել թղթակիցների խմբակում: Գործարկոմի ներկայացուցիչը թղթակիցների խմբակում պրոֆաշխատակիցներին կամ ձեռնարկության արտադրությանը վերաբերող մի կենսական հարց ե դնում և գեկուցում այն մասին, թե ինչ զըության մեջ և գտնվում հարցը և ինչպես պետք ե լուծել:

Ֆարգործարկոմը պետք ե պատի թերթին ու բանթղթակիցների խմբակին նյութապես ոգնի: Պատի թերթի հրատարակման համար հարկավոր ե թուղթ, թանաք, մատիտ, ներկեր և այլն, Խմբակում կուլտ-կրթական աշխատանքներ կատարելու համար հարկավոր ե ունենալ թղթակցական գրականություն:

Ֆարգործարկոմը պետք ե կուլտ ֆոնդից վորոշ բաժին հանի խմբակին անհրաժեշտ գրականություն ձեռք բերելու համար: Խմբակի պարագաների համար պետք ե ֆարգործարկոմը տեղ գտնի:

Թղթակիցների խմբակի աշխատանքները

պետք ե սեռսորին կազմած լինեն բանակումբի աշխատանքների հետո Պատի թերթում լուսաբանվեն ակումբին կից բոլոր խմբակիների (գրական, թատերական, յիրաժշտական, զրադարանների և այլ սեկցիաների). աշխատանքները, Բանակումբը բանթղթակիցներին պետք ե ոժանդակի կենդանի լրագիր կազմակերպելու, մասուլի որը մասսայականացնելու և պատի թերթի շուրջը բանվոր-աշխատավորներ կազմակերպելու գործում:

Ֆարգործարկոմը բանթղթակիցներին ու պատի թերթին պետք ե ոժանդակի նոր թղթակիցների առաջ քաշման գործում: Դրա համար, բանվորական ընդհանուր ժողովներում, ֆարգործարկոմը պետք ե գեկուցումներ դնի պատի թերթի և թղթակցական աշխատանքների նշանակության մասին: Անհրաժեշտ ե, վոր գործարկոմը իր հուշվետվությունների ժամանակ կանգ առնի և պատի թերթի ու թղթակիցների վրա, նշի նշանց կարևորությունն ու կոչ անի բանվորներին համախմբվելու պատի թերթի շուրջը:

Ֆարգործարկոմը թղթակիցներին կարող ե և պետք ե ոգնի թղթակցությունների քննության ժամանակ և թղթակիցներին պաշտպանի հալածանքներից: Գործարկոմը պետք ե պարբերաբար և իր ժամանակին պատասխանի պրոֆե-

սլոնալ և հասարակական կազմակերպությունների աշխատանքների վերաբերող թղթակցություններին։ Այսուհետեւ պետք է հետեւ, վոր տնտեսվարների աշխատանքի բացերի մասին գըված թղթակցություններն անուշադիր չմնան։ Նկատելի յերկութեւ, վոր թղթակիցներին ճնշելու համար հաճախ նրանց պաշտոնը փոխում են աշխատավարձը ցածրացնում, կամ աշխատանքի այնպիսի պայմաններ ստեղծում, վոր թղթակիցը ստիպված լինի իր հոգար կամքով պաշտոնից հրաժարվել։

Մեր տեղկոմները նման գեպերում պետք ե վոչ թե հեռվից նայեն, կամ հալածողների կողմանցնեն, այլ պարտավոր են կտրուկ միջոցների գիմեր, բանթղթակցի գեմ սկսած հայածանքը կանխեր, վերադաս որդանների միջոցով մեղավորներին պատասխանատվության յենթարկել։ Բանթղթակիցներն իրենց հերթին պետք ե սերտ կապ ստեղծեն տեղկոմների հետ և ամեն անգամ պըռփեսիոնալ աշխատանքների ըընդությանը բարեկամական և գործնական բնույթ տան։

6. ԲԱՆԹՂԹԱԿԻՑՆԵՐԻ, ՏՆՏԵՍԱՎԱՐՆԵՐԻ ՅԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Բանթղթակիցների, անտեսավարների և մասնագետների միջև առողջ փոխհարաբերություններ ստեղծելու խնդիրը բանթղթակցական աշխատանքների ցավուա հարցերից մեկն եւ։

Մեր թերթերում բազմաթիվ թղթակցություններ են ապկում այն մասին, վոր տնտեսավարները և մասնագետները պատի թերթերին ուշագրություն չեն դարձնում, ապկած նկատողակություններին չեն պատասխանում, թղթակիցներին հալածում են և ացն։ Մյուս կողմից նըկատվութեալ են գեպեր, յերբ բանթղթակիցները ինտեսվարներին ու մասնագետներին համարում են մեզ թշնամի տարր և նրանց գեմ կովում են, տշխատելով այդ «թշնամի» տարրերի հետ վոչ մի հարաբերություն չունենալ։ Բայց այդ հիմնովին սխալ եւ, Մանավանդ այժմ, յերբ մեր առաջ գրված են մեր յերկրի ինդուստրացման, անտեսաւթյան մեջ խնայողական ըեժիմի կիրառման, արտադրության ռացիոնալիզացիայի և նման մի շարք կարևորագույն հարցեր, անհրաժեշտ եւ, վոր բանթղթակիցների, անտեսավարների և մասնագետների միջև առողջ փոխհարա-

բոլթյուն ու սերտ համագործակցություն ստեղծվի:

Կոմկուսի կենտկոմը 26 թվի ոզոստոս 28 ին բանթղթակցական աշխատանքների մասին կայացրած իր վորոշման մեջ նշել ե, վոր կոմբջիջների հիմնական աշխատանքների մեջ են մըտնում հիմնարկության բանթղթակիցների և պատի թերթերի համար աշխատանքի նպաստավոր պայմաններ ստեղծելը, վոր կոմբջիջները պետք ե բանթղթակիցներին պաշտպանեն հալածանքից ու պետք ե հետեւն թղթակցությունների ձիշտ ընտությանը: Հենց չամկոմկուսի կենակոմի այս վորոշման հիման վրա յել պատի թերթի խմբելը ձեռնարկության վարչական դեկազար մարմինների ու անհատների հետ ունեցած վիճաբանությունների դեպքում պետք ե դիմի կոմբջիջի ոգնությանը:

Բանթղթակիցներն առաջին հերթին պետք ե մտածեն, թե իրենք վորքան են ձիշտ մոտենում խնդրին, սխալ չեն կատարել, անառողջ մոտեցումներ չեն ունեցել արդյոք մասնադեռներին կամ անտեսավարներին քննադատելիս:

Հաճախ բանթղթակիցները անտեսավարներին նայում են վորպես նախկին խաղեցինների: Դա հիմնովին սխալ ե և վտանգավոր:

Կարմիր անտեսավարների մեծ մասը բանվոր

դասակարգի շարքերիցն են դուրս յիկել: Նրանք բանվորական ակադիմիան են, վորոնց խորհրդավորներուն թյունը և կոմմունիստական կուսակցությունը վստահել են ձեռնարկության զեկավարությունը: Վոչ մի համեմատություն չի կարող լինել մեր դժուակարգի տնտեսավարների և հին խոզեցինների միջև: Կարմիր դիրեկտորը՝ դարձավոր գասակարգի գործակատարն ե, վորը վոչ թե իր համար ե աշխատում, այլ բանվորական պետության շահերի համար:

Թե բանթղթակիցների և թե անտեսավարների առաջ զրված ե միհնուցն խնդիրը՝ լուգացնել արտազրանքի վորակը, քարձբացնել աշխատանքի արտադրողականությունը, բարեկավել բանվորների աշխատանքի պայմաններն ու նըրանց կենցաղը և այլն: Բանթղթակիցները և լրաց կենցաղը և այլն: Բանթղթակիցները և անտեսավարները, թե ետարբեր ձեռքով, բայց կատարում են մի պարտականություն, դրա համար նրանց ձեչ պետք ե լինի համերաշխատթյուն, ել նրանց ձեչ պետք ե լինի համերաշխատթյուն, ընկերական փոխարարերություն ու համագործակցություն:

վերջինս ավելի հեշտությամբ գլուխքերելու համար նորընտիր խմբկոլը պետք է խորհրդակցության հրավիրի թղթակիցներին ու բանվորական ակտիվ ուժերին, վորոնք կարող են այս կամ այն կերպ նպաստել թերթի հաջողության, Խորհրդակցության ժամանակ պետք է պարզել, թե ինչի մասին և ինչպես պետք է գրել պատիթերթում, վորպեսզի նա հետաքրքիր և բովանդակալից լինի։ Պատիթերթում պետք է զետեղել այնպիսի նյութեր, վորոնք շոշափում են բանվորի և գյուղացու կյանքի այլ և այլ կողմերը, նրա աշխատանքի պայմանները։ որինակինչ կոնֆլիկտներ են ծագել վարչության և բանվորների միջև և ինչ լուծում են ստացել դրանք և այն։ Պետք է բանվորներին առաջարկել, վոր գրեն այդ և ուրիշ իրենց հետաքրքրող հարցերի մասին։ հակառակ զեպքում խմբկոլի անդամներն իրենք պետք է տեղեկանան գործարանում կատարվող լերեալիթների և դեսլերի մասին և իրենք գրեն։

Անհրաժեշտ է, վոր խմբկոլն այս առթիվ խորհրդակցի բջիջի բարտուղարի, գործարկոմի կամ գյուղապետի նախագահի հետ, վորոնք մոտ կինելով գործարանային կամ գյուղական կյանքին, կարող են հետաքրքիր նորություններ հագուստ և ողտակար ցուցմունքներ տալ։

II.

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊԻՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՊԱՏԻ ԹԵՐԹԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Պատիթ թերթի հաջողության համար ամենից առաջ ամհրաժեշտ է, վոր դրան լայն մաս նակցություն ցույց տան բանվորներն ու գյուղացիները։ Յեթե պատիթ թերթը լավ հիմքերի վրա չի գրված, անհնար են նրա շուրջը կազմակերպել բանվորներից և զյուղացիներից թղթակիցների խմբակներ։ Յեթե պատիթ թերթն ուշուշ ե լուս ընծալիքում և բովանդակալից չե, ապա, նա ընթերցողների հետաքրքրությունը չի շարժում և հաջողություն չի ունենում։ Այդ գեպքում պետք է նոր խմբազրական կոլեգիա ընտրել։

Նորընտիր խմբկոլի առաջին գործը պետք է լինի՝ ամեն կերպ աշխատել, վոր թերթի հենց առաջին համարը կենդանի և հետաքրքիր լինի. այդ գեպքում նա ընթերցողների ուշագրությունը կզրաքի և նրանց աջակցությունն ապահոված կլինի։ Դրանով համեմատաբար պելի հնեշտանատ թղթակիցներ զբավելու և նյութեր հավաքելու գործը։

Դիցուք զործարկոմը և միությունը պահանջում են բարձրացնել աշխատավարձը, իսկ վարչությունն առարկում ե, պատճառաբանելով, թե արտադրողականությունը ցածր լինելով հարավորություն չկա աշխատավարձը բարձրացնելու։ Անհրաժեշտ ե, վոր թե վարչությունը և թե զործարկոմն ու բանվորական ակտիվը պատի թերթում լուսաբանեն իրենց տեսակետներն այդ հարցի մասին։ Դա կենդանի հետաքրքրություն կառաջացնի բանվորների մեջ և բացի այդ, գրանով բանվորական լայն մասսաները հնարավորություն կունենան ավելի մոտիկից ծանոթանալու իրենց հուզող խնդիրների շուրջը յեղած փորոշումներին, ինչպես և այդ հարցի լուծման համար տարվող աշխատանքներին։

Թերթի համար թղթակիցներ գրավելու գործը դժվարանում է նաև այն պատճառով, վորոկքներում գեպքեր են պատահել, յերբ բանթղթակիցներին գործարանում հալածել են նըրանց գրած հոդվածների համար։ Պետք ե հայտարարել ի զիտություն բոլորին և բացատրել, վոր թերթին առենքն ել կարող են թղթակցել կեզծ անվան տակ, և վոր խմբիուր դադանի յեպահում հոդվածագրի անունը։

Բացի այդ թղթակիցներին շահագրգուելու, թղթակիցներ գրավելու համար խմբիուր պետք

շարունակ սրինակնել բերի, թե ի՞նչ զործնական արգունքներ ե տվել, ի՞նչ հաջողություն ե ունեցել այս կատ այն թղթակցությունը՝ թե կուզ այլ զործարանների կյանքից։ Ամպիսով կարելի յե բանվորների հետև քրքրությունը շարժել և նոր նկութեր ստանալ պատի թերթի համար։

Նկութեր ստանալու համար կարելի յե նաև զրուց ունենալ զործարանի հին հեղինակավոր բանվորների հետ՝ նրանց կոնկրետ հարցեր տալով զործարանային կյանքի այս կամ այն խնդրի մասին։

Այս բոլոր միջոցները զործադրելուց հետո, կարելի յե վստահ լինել, վոր թերթի համարը հետաքրքիր կլինի։

Մենք չենք ասում, վոր այդ գեպքում թերթն անպայման հետ սբրքիր կինի և իսկույն թղթակցություններ կաեղան։ Բացի արդ, մենք չենք ասում, վոր խմբիուր անդամները կարող են շատ հեշտությամբ նկութեր հավաքել, կարող ե պատահել, վոր գործարկումուն միայն իրենց նիստի արձանագրություններն առաջարկեն թերթի համար, կտավարքիչը կարող ե տամրկել թե զբուգած ե, իսկ զործարանի բանվորը կարող ե նրան կուզտաբար մերժել նյութ տալ Ազգպետ վարչությունները շատ անգամ իրավացի լեն, վորով-

հետեւ նախ պետք ե համառ, անդուլ աշխատանքով և հոգասար վերսարերմունք ցույց տալով՝ հետաքրքրություն զարթեցնել դեպի թերթը և ապա միայն ուշադիր վերաբերմունք պահանջել:

1. ՊԱՏԻ ԹԵՐԹՈՒՄ ԲԱԺԻՆՆԵՐ ՊԵՇՔ Ե ՈՒՆԵՆԱԼ ԹԵՇ ՎՈԶ

Սովորաբար պատի թերթերում հետեւալ բաժիններն են լինում՝ Մեր կյանքը, Արհմիութենական կյանք, Կուսակցական, Մեր թերությունները, Յերիտասարդության կյանք, Կուտաշաշատանք, Կենցաղային խնդիրներ, Աշխատանքը բանվորների մեջ, Գյուղը, Կամավոր ընկերություններ, Զինվորական կյանք և այլն:

Հարց ե ծագում, թե անհրաժեշտ ե արդյոք, վոր թերթում մշտական բաժիններ լինեն, թե ավելի նպատակահարմար ե նյութերը խըմբավորել ըստ իրենց բովանդակության և զետեղեղել թերթում ամեն անգամ նոր ընտրած համապատասխան ընդհանուր վերնագրի տակ, պահպանելով, իհարկե, յուրաքանչյուր հոգվածի համար առանձին վերնագրի:

Վերջին ձեզ շատ առավելություններ ունի:

Յեթե թերթը հրատարակվում ե մշտական բաժինների վերնագրերով, ապա այդ վերնագրին հաճախ ձանձրութիւն դարձնում պատի թերթը, Բացի այդ, յեթե մշտական բաժիններից մեկի համար նյութ ե պակասում, խմբկոյն աշխատում ե բաժինը լրացնելու համար մի անրովանդակ հողված թխել բաղկացած ընդհանուր ֆրազներից և դատողություններից։ Պատահում ե նաև, վոր միենույն բաժնի, որինակ՝ արհմիութենական կյանք բաժնի համար մի քանի հողվածներ են ստացվել. շատ անգայ զրանց թվում պատահում են հողվածներ, վորը ավելի ցավեցեղել վոչթե ընդունված Արհմիութենական կյանքի բաժնում, այլ առանձնացնել ավելի կենդանի վերնագրի տակ զետեղել։ Հաճախ ել պատահում ե, մի քանի թղթակցություններ վերաբերում են տարբեր բաժինների։ Որինակ՝ մի թղթակց գրում ե գողության համար գործարանից արտաքսված բանվորի մասին։ Բայց կա մի թղթակցություն ել, վոր հաղորդուց կա մի թղթակցություն ել, վոր հաղորդում ե ալս ինչ բանվորի կատարած խուլիգանության մասին։ Ընդունված ձեռվ այդ թղթակցություններից առաջինը պետք է զետեղել, «Ճեթերությունները» բաժնում, իսկ յերկրորդ՝ «Ճեր կենցաղը» բաժնում։ Սակայն նպագր՝ «Ճեր կենցաղը» բաժնում, Սակայն նպագրականարմար ե տարբեր բաժիններին վերա-

բերլու այդ նյութերը միացնել մի ավելի ուշազը ընդհանուր վերնագրի տակ, որինակ՝ «այդպիսիները աեղ չպետք է ունենան բանվորական շաբթերում»:

Այդպես, ուրիշն, ավելի գերադասելի յե հրաժարվել մշտական բաժիններ ունենալուց Բայց այդ, ինարկ ե, չի նշանակում, վոր նյութերը պետք է պատահական կերպով, առանց վորոշ պլանի, ցիրուցան դասավորվեն թերթում: Պարզ է, վոր նյութերը պետք է խմբավորել ըստ բովանդակության, վորոշ սիստեմով, վորոշ պլանով գետեղել: Անհրաժեշտ է միայն չկաշկանդվել մի անգամ ընդ սիշտ ընդունված վերնագրերով, պետք է բազմազանություն մտցնել ընդհանուր վերնագրերի մեջ, ցայտուն, աչքի ընկնող վերնագրեր ընտրել: Մշտական բաժիններ պահպանելու մի այլ բացառական կողմն ևս այն է, վոր նրանք վարժեցնում են ընթերցողին միայն վորոշ բաժինները կարդալու: Գործարկումի անդամները աչքի յեն անցկացնում միայն «Արհմիութենական կյանք» բաժինը, բանվորունիները՝ «բանվորունիների կյանք» բաժինը և այլն: Ընթերցողի ուշադրությունը գրավում է միայն մի վորոշ բաժին: իսկ ընդհանուր նշանակություն ունեցող բաժիններն աչքաթող են արվում:

2. ԻՆՖՈՐՄԱՑԻԱՆ ՊԱՏԻ ԹԵՐԹՈՒՄ

Պատի թերթի աշխաժացման կարեսը միջոցներից մեկն ել թերթում ինֆորմացիա գետեղելն է:

Նախ և առաջ ի՞նչ է ինֆորմացիա:

Ինֆորմացիոն նյութ կարելի յե անվանել այն բոլոր տեղեկությունները, վորոնք արփում են առանց վորեկե գնահատումի: որինակ՝ ինֆորմացիա յե հետեւյալ նյութը. «Գրաշար Մամիկոնյանը չորս որ աշխատանքի չի յեկել, այդ պատճառով վարչությունը նրան տուղանել է 4 որփա աշխատավորձի գումարով»:

Սա ինֆորմացիա յե. հեղինակը սոսկ տեղեկություն է տալիս պատահած դեպքի մասին, առանց իր վերաբերմունքը ցուց տալու:

Այժմ նույն տեղեկությունը տանք հետեւյալ ձևով:

«Գրաշար Մամիկոնյանը 4 որ աշխատանքի չի յեկել, այդ պատճառով Վարչությունը նրան տուգանել է 4 որփա աշխատավորձի գումարով: Մեր արտադրությունը շատ է վնասվում այն պատճառով, վոր բանվորները որերով աշխատանքի չեն գալիս, մանավանդ տոն որերի քեֆերից հետո: Այդպիսիների վրա, գժբախտաբար, ընկերական հորդորները չեն ազդում, ուս-

ամի վարչությունը ստիպված ե լինում այդ սիսի
սիջոցների զիմելու ջավում եմ, վոր մեր շըր-
ջանում զես այդպիսի տարրեր կան»:

Այսուհեղ արդեն մեր վարաբերունքն ենք
ցուց տալիս զեպքին, հւանապես գնահատում ենք
յերեւլթը՝ դա արդեն սօսկ ինֆորմացիա չե:

Կա ինֆորմացիա, վորը շատ ե սպնում
բանվորին՝ նրա առորդա կանքում: Որինակ՝
թերթում տեղեկություն ե տրվում, թե ի՞նչ ճա-
նապարհով պետք ե նպաստ ստանալ ասպահով-
գանձարկղից և գրա համար ում պետք ե զիմել,
ինչպիսի փաստաթղթեր պետք ե ներկայացներ, ինչ
կարգով պետք ե ոգտվել արձակուրդներից և
ազն: Բանվորներն ըստ արժանավույն կգնահա-
տեն նման ինֆորմացիան, վորովհեակ նրանք ի-
րենց համար անհրաժեշտ տեղեկությունները
ստանալու համար զես ու զեն չեն ընկնի և ա-
փելորդ ժամանակ չեն կորցնի: Այդպիսով նր-
անք կզգան, վոր լրացին, իրոք, իրենց ողնա-
կանն ե հանդիսանում:

3. ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՈՒՂՂԵԼ ԱՏԱՅՎԱԾ

ՀՐԴՎԱԾՆԵՐԸ

Թերթի հաջողության համար շատ կարեոր
է, վոր նրա լեզուն լինի պարզ ու հասկանալի,
նույնիսկ կիսագրագետ բնթերցողի համար: Ուս-
տի խմբկող պետք ե ստացված նյութերը լով
հղի, մշակի:

Թերթի համար զանազան նյութեր ե ստաց-
վում: Կան նյութեր, վարոնք լավ լեզվով են
զրված, բայց շատ լերկար են, ձգձգված, լիքն
են ավելորդաբանություններով: Այդպիսի նյու-
թերը խմբկողը պետք ե սիմեն կրծատի:

Ստացվում են նյութեր, վորոնք կիսագրա-
գետ լեզվով են զրված: Դրանց լեզուն պետք ե
ուղղել, պատշաճ ձեռվ մշակել: Բայց այդ աշ-
խատանքը խնամքով պետք ե կատարել: Պետք
ե աշխատել, վոր պահպանվի հեղինակի ուրույն
վոճը, նրա արտահայտությունները, առանձնա-
հատկությունները, նրա պարզ բանվորական լե-
զուն: Զպետք ե հոդվածին գրական «բարձր»
վոճ տալու ջանքերով հեղինակի կենզանի ար-
տահայտությունները գեն գցելով, նյութն «ա-
նալի» մի հոդված գարձնել:

Ստացված նյութերի մեջ լինում են նաև
հոգվածներ, վորոնք գրված են կանոնավոր, ու-
ղիղ, բայց չոր ու ցամաք լեզվով, արձանա-
գրության վոճ ունին: Այդպիսի հոդվածն ավելի
գժվար ե ուղղել, բայց վորոշ չափով գրանց ել
կարելի յե կենդանության տար, աշխատացնել:
Նախ և առաջ պետք ե զուրս զցել մի շարք
ստագուեկ, շաբան բառերն ու նախագահու-
թյունները, որինակ՝ «նկատի ունենալով վերո-
հիշալը», «զեկավարվելով հիշալ ցուց ունենե-

ըով՝ «հիմնվելով վերոհիշյալի վրա» և այլն. Այդպիսի հոդվածները պետք են պարզացնել, փոփոխելով նախադասությունների կառուցվածքը, և դուրս ցցելով ավելորդ բառերը:

Կան, վերջագես, մի շարք նյութեր ել, վարոնք պետք են հիմնովին վերամշակել վորպեսզի նրանք պարզ, հասկ օնալի ու կենդանի դասնան և ընթերցողի վրա տպագորություն թողնեն: Յեթե նյութը հետաքրքրական են ընթերցողի համար, ավելի լավ են այդ նյութից մի նոր հոդված կազմել:

Սակայն կան դեպքեր, յերբ խմբելով համար նպատակահարժար են վերամշակել նաև լավ լեզվով գրված հոդվածը: Որինակ, բանթղթակցից ստացել են մի լուրջ և գործնական հոդված՝ գեղձումների մասին, գրված են պարզ և կենդանի, կանոնավոր լեզվով: Հոդվածը, անշուշտ, տուանց փոփոխության կարելի յեն զետեղել պատի թերթում: Սակայն գեղձումների հարցը հրատապ, ժամանական մի կարեսը հարց են և խըմբելով ցանկան ւմ են այդ նյութն ավելի հետաքրքիր ձևով տալ՝ դեպի այդ հարցն ավելի ուշադրություն դրագելու համար: Նման գեղձերում խմբելով նախապես խոսելով հոդվածագրի հետ և նրա մասնակցությամբ, փոխում են հոդվածը, ֆելետոնի ձև և տալիս նրան և ողատիե-

բազմարդում են կարիկատուրաներով (ծաղրանկարներով):

Ի վերջո, անհրաժեշտ ենք համարում կանգառնել մի հարցի վրա ևս:

Մեր պատի թերթերը մի խոշոր թերթություն են ունեն: Նրանց մեջ քերականական բազմաթիվ սխալներ են լինում: Հաճախ միայն վերնագրի մեջ մի քանի սխալներ են պատահում: Սխալ են զրված լինում նույնիսկ թերթի անունը: Հարկավ, այգտեղ սարսափելու վոչինչ չկա. պատի թերթ հրատարակող մեր ընկերները մեծ մասամբ բանվորներ են, վորոնք ուստւմ չեն ստացել, ուստի իրենց թերթի մեջ շատ սխալներ են անում: Բայց բանվոր լինթերցողի աշքը վարժվում են այդ սխալներին և նա ինքն ել սխալներով են գրում հոդվածները:

Այդ պատճառուվ, խորհուրդ ենք տալիս, վոր խմբելով թերթի նյութն առաջման հանձնի իր դրագետ անդամին, փորպեսզի նա ուղղի քերականական սխալները. յեթե խմբելով կազմի մեջ մի այդպիսի ընկեր չկա, կարելի յեն խնդրել մի այլ ձեռնահաս ընկերոջ, վոր այդ աշխատանքը կատարի:

III.

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՊԱՏԻ ԹԵՐԹԻ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԼԵԳԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Պատի թերթի խմբկոյն ընտրվում է թլդ-թակիցների ընդհանուր ժողովում։ Այս ձեռնարկություններում, վորտեղ չկա գեռ կազմակերպված թղթակիցների խմբակ, նախաձեռնող մի վորեե խմբակ հավաքում է թղթակիցներին, վորտեղ և ընտրվում է խմբկոլը։ Այդ առաջին հավաքությունը հանդիսանում է նաև թղթակցական խմբակի առաջին կազմակերպչական ժողովը։ Իսկ յեթե պատի թերթը նոր է կազմակերպվել և թղթակիցներ բացակայում են, նույն այդ նախաձեռնող խմբակը ժամանակավորապես հանդիսանում է թերթի խմբկոլը։

Նախաձեռնող խմբակի հիմնական աշխատանքները պետք են լինեն։

Նախ՝ առաջ քաշել թղթակիցներ և կազմակերպել թղթակցական խմբակ, վորից հետո միայն անցկացնել խմբկոլի ճիշտ ընտրություններ։

Ամեն մի խմբկոմի հիմնական անելիքներն ։

1) Թերթերի համար նյութեր հավաքել և մշակելլու։

2) Կազմել և լուս ընծալել պիտի թերթը։
3) Կատ պահպանել ձեռնարկության կուսակցական, պրոֆեսիոնալ և հասարակական կազմակերպությունների հետ։

4) Պատի թերթի համար առաջ քաշել թըղթակիցներ և մասսայական աշխատանք կատարել նրանց մեջ։

5) Դեկավարել խմբակի աշխատանքները։
6) Պատի թերթի և խմբակի աշխատակիցների հաշվառում կատարել։

Համախ թե՛ մասուլում և թե՛ ժողովներում լովում են գանգատաներ այն մասին, թե՛ խմբկությի անդամները ծանրաբեռնված են և մենք չենք կարող թերթը լուր ժամանակին լուս ընծալել։ Այս հանգամանքը բղիսում է նրանից, վոր խըմբկոլը չի կարողանում ճիշտ կազմակերպել իր աշխատանքները և պատի թերթի աշխատանքներին մասնակից դարձնել լայն խավերին, համախմբելով թերթի շուրջը, նրանցից պատրաստել թղթակցական ակտիվ, վորը խմբկոլի հետ միասին կաշխատի թերթի աշխատանքները կարգավորել։

Մեծ մասամբ պատի թերթի աշխատանքների ամբողջ ծանրությունն ընկնում է խմբկությունների, կամ յերկու անդամի վրա, իսկ մասամբ անդամները մատր մատին չեն խփում։ Նը-

ման պարմաններուն հրտառարակվող պատի թերթը յերկար ժամանակ գոյություն ունենու չի կարող:

Այդ խոշոր բացր վերացնելու համար անհրաժեշտ ե վորպեսզի խմբկոլի բոլոր անդամները կազմած լինեն թերթի աշխատանքների հետ, վոչ միայն ձևականորեն, այլ ակտիվ կերպով մասն սկցեն այդ աշխատանքներիը: Խմբկոլն այնպես պետք ե իր աշխատանքները կազմակերպի, վորպեսզի խմբկոլի ամեն մի անդամ մի պարտականություն ունենա:

Պատի թերթի խմբկոլն ամեն միջոց ձեռք պետք ե առնի, վոր իր անդամները չծանրաբեռնվեն այնպես, վոր զա խանգարի թերթի աշխատանքներին: Աշխատանքների բաշխման ժամանակ կոմբջիջը, գործարկոմը և այլ զեկավար մարմիններ պետք ե նկատի ունենան, վոր խմբկոլի և խմբակի աշխատանքներին մասնակցելը նույնպես կուսակցական-հասարակական պարտականություն ե և խմբկոլի անդամներին նորից չծանրաբեռնեն այլ աշխատանքներով:

Խմբկոլի այն անդամները, վորոնք ձևականորեն են կազմած խմբկոլի աշխատանքներին, անհրաժեշտ ե աղատել խմբկոլի անդամությունից և փոխարեն ընտրել նոր անդամներ:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱՇԽՈՒՄԻՄ ԿԱՏԱՐԵԼ ԽՄԲԿՈԼԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԵՋ

Պատի թերթի պրակտիկակից մենք գիտենք, վոր հաճախ խմբկոլի անդամներին ամրացնում են պատի թերթի առանձին առանձին բաժինները ղեկավարելու: Նման ձեի կատարած աշխատանքի բաշխումը կոլլեգիայի անդամների մեջ, այսքան ել նպատակահարձար չե, վորովհետեւ աչքաթող ե արվում խմբկոլի աշխատանքների մյուս հիմնական կողմը (խմբակի աշխատանքների ղեկավարությունը, կապ կուս, պրոֆ. հասարակական կազմակերպությունների հետ և այն), Պատի թերթերի բաժանումը մի քանի բաժինների, արդեն պետք ե հնացած համարել: Խմբակի անդամների մեջ աշխատանքի բաժանում կատարելիս՝ յելակետ պետք ե ունենալ այն հերթական և կարևորագույն խնդիրները, վորոնք զրված կլինեն խմբկոլի առաջ:

Խմբկոլի և բանթղթակիցների խմբակի աշխատանքների հաջողության աեսակեալից, անհրաժեշտ ե սերտ կապ սահեղձել ձեռնարկության վարչության, կուսակցության, կոմերիտմիության, պրոֆեսիոնալ և այլ հասարակական կազմակերպությունների հետ:

Կոլլեգիայի ավելի հեղինակավոր անդամնե-

րին պիտի հանձնաբարել մշտական կազ պահանել վերոհիշյալ կազմակերպությունների հետ:

Կցված ընկերները պետք ե խմբկոլին միշտ տեղյակ պահեն այդ կազմակերպություններում տարվող աշխատանքների, նրանց նոր նախաձեռնումների հետ և պատի թերթի ժիջոցով պիտի լուսաբանեն բոլոր հարցերը:

Բացի այդ, կցված ընկերները ժամանակին պետք ե համապատասխան կազմակերպությունների հետ խորհրդակցեն այն խնդիրների մասին, վորոնք վերաբերում են պատի թերթին և թղթակիցների խմբակին. ինչպես որինակ՝ թերթին նյութական ոժանզակություն ցույց տալը, թղթակիցների ժողովի համար շենք արամադրելը, զրականություն մատակարարելը և այլն:

Խմբկոլի ձեռնհաս և խմբագրական աշխատանքներում փորձված անդամներից մեկին պիտի հանձնաբարել խմբկոլի և պատի թերթի բարտուղարի պարտականությունը: Քարտուղարը պետք ե հարցեր նախալաւարաստի և խմբկոլի նիստեր հրավիրի, հետեւ և հակի, վոր խմբկոլի վորոշորմները կյանքի մեջ կիրառվեն, պատի թերթի համար հավաքված նյութերի նախական մշակումը և գասավորումը կատարվի: Խմբկոլի անդամներից մեկին պետք ե հանձնա-

րարել խմբակի կազմակերպչական աշխատանքները, նրա պարտականությունն ե լինելու խմբկոլի և խմբակի ժողովներին առաջադրել խմբակի աշխատանքներին վերաբերյալ հարցեր, զուժաբել թղթակիցների խմբակի ընդհանուր ժողովներ և հրավիրել զեկուցողներ, խմբակի սպարապետների համար ծրագիր կազմել, կազ հաստատել տպագիր թերթերի խմբագրությունների հետ, թղթակիցների հաշաեսում կատարել, առաջ քաշել նոր թղթակիցներ և այն:

Անհրաժեշտ ե, վորպեսզի պատի թերթի խմբկոլի և թղթակիցների խմբակի աշխատանքները շարագված լինեն: Շաղկապող այդ ողակը պետք ե խմբակի կազմակերպիչը լինի, վորը միենույն ժամանակ հանդիսանում ե խմբկոլի անդամ: Սակայն խմբակը չպետք ե թղթակցի խմբակի աշխատանքների ամբողջ ծանրությունը բարդի մեկ անգամի վրա: Խմբակի աշխատանքների համար պատասխանատու յե խմբկութիւն իր ամբողջ կազմով: Հենց դրա համար ել խմբկոլի նիստերին հաճախակի պետք ե ըննության առնվեն խմբակին վերաբերող հարցերը:

Խմբկոլի անդամների մեկին պիտի հանձնաբարել թղթակիցների դիտողությունների և նրանց արդյունքների հաշվառումը: Այդ նույն ընկերոջ պարտականությունը պետք ե լինի

հարկավոր դեպքում համապատասխան կարծությունների միջացով շատապեցնել դիտություններում մատնանշված հարցերի ընկությունը։ Մեկ կամ յերկու ընկերոջ ել պետք ե հանձնուրարել նյութերի խմբագրումը։

Պատի թերթի աշխատանքների մեջ առանձնակի տեղ ե բունում թերթի արտաքին գեղեցկության, նկարները զետեղելու աշխատանքը։ Հաճախ թերթը լուս ընծայելու վերջին ըոպելին է խմբկուը գլխի ընկնում, վոր թերթն իր արտաքինով անշուք ե։ Ազդ դրությունից խուսափելու համար, նպատականարմար ե ընկերներից սեկին հանձնարարել հետևել հատկապես թերթի արտաքին գեղարվեստական կողմին, վոր նա միջոցներ ձեռք առնի թերթում համապատասխան ծաղրանկարներ լինեն և այլ։

Իհարկե, խմբկոյն ի վիճակի չե ընդգրկելու աշխատանքների բոլոր ոյն բնադրագուները, վորոնք այստեղ նշվեցին, յեթե աշխատանքները մասնակից չարգին և այն բոլոր ընկերները, վորոնք գրում են պատի թերթում և այս կամ այն կերպ մասնակցություն են ունենում պատի թերթի աշխատանքներին։ Այսն մի պատի թերթի խմբկոյ պետք ե սիջոցներ ձեռք առնի, վոր վորքան կարելի յե շատ ընկերներ տ-

ուաջ քաշվեն և կապվեն թղթակցական շարժման գործնական աշխատանքների հետ։

Այս ձևով խմբկոյը թղթակիցներին զրավելով գեղի իր աշխատանքները, աստիճանաբար նրանցից թղթակցական ակտիվ ե պատրաստում, վորպիսի հանգամանքը խոշոր նշանակություն ունի թե պատի թերթի աշխատանքները լավ հիմքերի վրա գնելու և թե բանվորական լայն մասսաներին մեր հասարակական աշխատանքների մեջ ընդգրկելու տեսակետից։

Խմբկոյում նման աշխատանքի բաշխում կատարելուց հետո պատասխանատու խմբագրի հարցն ավելորդ ե դառնում։ Նամանավանդ փորձից մենք գիտենք, վոր հաճախ պատասխանատու խմբագրը խմբկոլի առանձին-առանձին անդամների նախաձեռնությանն ալ գելը ե հասդիմություն, նրանց աշխատանքները հավասարեցնում ե լոկ տեխնիկական ֆունկցիաների։

Պատասխանատու խմբագրի փոխարեն պետք ե աշխատի խմբկոլը, նրա պարտականությունները կոլեկտիվ կերպով պետք ե կատարեն խմբկոլի բոլոր անդամները։ Խմբկոլի անդամների աշխատանքներին ընդհանուր ընթացք և նըրանց ցուցմունքներ տալու պարտականությունները կարելի յե և հնարավոր ե խմբկոլի քարտուղարին հանձնարարել։

IV.

ԽՄԲԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆԸ

Բանթղթակիցների խմբակի պարագմունքները քաղզբագիտության կամ հանրակրթական գասընթացքներ չպետք եւ դառնան։ Ճիշտ եւ, բանթղթակիցներին անհրաժեշտ են այդ առարկաները, ոսկայն այդ նա պետք եւ ուսումնասիրի այլ խմբակներում։

Խմբակի ուսումնական կրթական և դաստիարակչական աշխատանքը նախ և առաջ գործնական բնույթ պետք եւ ունենա։ Նա կապված պետք եւ լինի լրագրում բանթղթակցի կատարած աշխատանքի հետ, ձեռնարկության կյանքի և որվա հրատապ հարցերի հետ։

Այդ պարագմունքները պետք եւ բանթղթակցին սովորեցնեն իր աշխատանքը ճիշտ ճանապարհի վրա դնելու, լրագրային աշխատանքի վորակը բարձրացնելու, պետք եւ սովորեցնեն ուսումնասիրել և լուսաբանել բանվորների և ձեռնարկության կյանքը։

Պարզ եւ, վոր այդ պարագմունքները չի կարելի դնել վորոշ, սպառիչ ծրագրի շրջանակների մեջ, Պարագմունքի ընթացքում կյանքը շարունակ

նորանոր հրատապ խնդիրներ եւ առաջադրում եւ, վորովիճեակ խմբակի պարագմունքի առարկա պետք եւ հանդիսանա լինը՝ կյանքը, իր մարտական խնդիրներով, հասկանալի յե, վոր խմբակը ստիլված պետք եւ լինի շարունակ շեղվել ընդունված սիստեմատիկ ծրագրից։

Ի՞նչ եւ լինելու, սակայն, խմբակի պարագմունքների առարկան։

Խմբակն իր պարագմունքների ընթացքում պետք եւ ընդգրկի այն հարցերը, վորովնք առաջնակարգ կարեռություննեն և ամենից ավելի անհրաժեշտ եւ հնդանթղթակցի առորջա աշխատանքների համար։ Այլ խոսքով, խմբակը պետք եւ ըստ առաջարկի գործարանային կյանքի հրատապ հարցերը, զանազան կամացանիւններն ու գործարանում դրանք իրականացնելու յեղանակները։

1) Քննարկի գործարանային կյանքի հրատապ հարցերը, զանազան կամացանիւններն ու գործարանում դրանք իրականացնելու յեղանակները։
2) Վերլուծի տպագիր լրագրի հրահանգիչ նամակները, հոդվածները։

3) Քննարկության յինթարկի պատի թերթի լույս տեսած համարները և հերթական համարների պլանները։

4) Քննարկի բանթղթակիցների շարժման հետ կապված հարցերը, բանթղթական թերթերում գետեղված զեկավարող և ուսումնասիրական հոդվածները։

5) Քանի բանթղթակցական խորհրդակցություններին վերաբերյալ նյութերը:

Պատի թերթի խմբկոլը կազմում ե խմբակի
2-3 ամսվա պարապմունքների մոտա-
վոր ընդհանուր պլանը։ Երա մեջ դրված
պետք ե լինեն այն հարցերը, վօրոնք խմբկո-
ւի կարծիքով, անհրաժեշտ ե մշակել խմբակում։
Սակայն պետք ե վորոշ համաշափություն պահ-
պահել ուսումնասիրվելիք հարցերի մեջ։ միան-
գաման աննպատակահարմար ե, որինակ, մի
ամբողջ ամիս զբաղվել միենաւմն հարցում։

Բացի այդ, պլանը պետք է ճկուն լինի, յեթե պարապմունքների ընթացքում պլանում չընախատեանված մի նոր հետաքրքիր խնդիր ծագի խմբակը՝ հետաձգելով պլանուժ նշանակված խնդրի ուսումնասիրությունը, պետք է զբաղվի նոր ծագուծ խնդրով:

Խմբակում քննվող առաջնակարգ՝ անմիջականորեն բանթղթակցական գործին վերաբերյալ հարցերից դուքս կան նաև մի շաբթ հարցեր, վորոնց ուսումնասիրությունն ոգտակար կլիներ բանթղթակցի համար, որինակ, գործարանի պատճությունը, բանվորական ժամուղի պատճությունը, լրազրային գործը և այլն Վորքան եւ դրանք ոգտակար լինեն բանթղթակցի համար, այնուամենայնիվ նրա անմիջական

դործնական աշխատանքի նկատմամբ յերկրութական տեղ են բանում, ուստի նպատակահարմար ե, վոր այդ հարցերն ուսումնասիրել ցանկացողները միանան և այդ նպատակով իրենց համար հատուկ խմբակներ կազմակերպեն:

1. ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԱԿՈԵԼ, ԽՄԲԱԿԻ ՊԱՐԱՊՄՈՒԽԹԸ

Նախ և առաջ պետք ե աշխատել, վոր
խմբակի հենց առաջին պարապմունքը հետա-
քը ըստ լինի և բանթղթակիցների մեջ ցանկու-
թյուն հղանաւ հետագայում ևս շարունակելու
այդ պարապմունքները: Առաջին պարապմունքի
առարկա պետք ե դարձնել այնպիսի մի հարց,
վորն այդ մոմենտին ընդհանուրի հետաքրքրու-
թյունն ե շարժում: Այդպիսի մի հարց կարող է
լինել՝ մի տեղ նոր կոպարները, մի այլ տեղ՝
կոլեկտորի պայմանագրերը, կոռպերատիվի հար-
ցը և այլն:

Սակայն ինչ հարցով ել պարագելու Ար-
ևմբակի առաջին ժողովը, պետք ե նախ և ա-
ռաջ այդ հարցին վերաբերյալ վորոշ նյութեր
պատրաստել: Յենթադրենք թե առաջին ժողո-
վում քննարկվելու յե կոոպերատիվի աշխատան-
քը: Բայց չե վոր կոոպերատիվի աշխատանքը,
թեկուզ միայն գնահատելու համար, անհրա-

ժեշտ և պիտենալ, թե ինչպես պետք ե աշխատեն կոռպերատիվներն առհասարակ, Յեթե, ուրինակը բանթղթակցիները չգիտեն, թե կոռպերատիվը պետք ե մասսաներին ներգրավի իր նեն կոռպերատիվ աշխատանքի այդ բնազավոր, չեն ել շոշափի այդ հարցը: Ուրեմն ժողովի անտիվ աշխատանքի նկատմամբ ի՞նչ պահանջներ թյունը: Խորհրդացին հասարակայնությունը:

Ուստի խմբելով պետք ե վոչ միայն իր կոռպերատիվ գործունելության վերաբերյալ տեղեկություններ պատրաստի ժողովի համար, այլ ընդհանուր բնույթ կրող նյութեր, այն են ձերն ու վորոշումները կոռպերացիալի մասին, բրոցուրներ և տեղեկատուններ կոռպերացիայի աշխատանքի մասին, և այն:

Պարապմունքը կարելի յե ոկուլ կոռպերացիալն վերաբերյալ մի վորեկ բանթղթակցունից, վոր կարելի յե գտնել համարյա, ապին հարց տալով, թե ի՞նչ են խոսում ներկանարկել նրանց այդ կարծիքներից կանալը կոռպերացիալի մասին և քըն-

ի առաջարկել, վորի մեկը պատմի կոռպերացիալի նվաճումների, իսկ մյուսը՝ նրա թերությունների մասին և ապա անցնել վիճականություններին:

Սակայն ինչպես ել ոկուլիու լինեն ովագումունքները, պետք ե աշխատել, վոր այդ բարագումունքների մերի ձեւերի մեջ բազմապատճեն պատճեն լինի, ազապես նրանք կարող զանություն լինի, ազապես նրանք կարող զուտով ձանձրացնել իրենց միորինակուն շուտով: Թող խմբելի հետ միասին ամբողջ խըմթյամբ: Թող խմբելի հետ միասին ամբողջ խըմթյամբ: Թե ինչ հարցեր և ինչպես բակը քննարկի, թե ինչ հարցեր և ինչպես բակը պատճենականությունների ժամկետը ե ուսումնասիրել պարապմունքների ժամկետը մանակի:

2. ՈՐԻՆԱԿԵԼԻ ԶՐՈՒՅՑՅ ԲԱՆԹՂԹԱԿԻՑՆԵՐԻ ԽՄԲԱԿՈՒՄ

Ներկա գլխում ցույց կտանք, թե ինչպես կարելի յե պարագմունքի ընթացքուն գործարանաւին կյանքի կոնկրետ վաստերը կապել կուսակցության և խորհրդական իշխանության ընդհանուր քաղաքականության հետ:

Ընդունենք, վոր զրույցի համար հիմք է ծառայում բանթղթակիցներից մեկի թղթակցությունն արտադրական խորհրդակցության աշխատանքների մասին: Թղթակիցն իր հոդվածում գրում ե, թե,

1) Մեր գործարանի արտադրական խորհրդակցությունները չափազանց թուլ են աշխատում:

2) Բանվորական մասսան չի ներգրավված այդ աշխատանքի մեջ:

3) Խորհրդակցության նախագահ ընկ. Մ. Խորհրդակցությունների վրա նայում ե, վորպես մի սոսկ ժամանցի վրա:

4) Վարչությունը՝ համաձայնելով խորհրդակցությունների առաջարկներին՝ իրոք նրանց վոչ մեկը չի իրականացնում:

5) Հոդվածի հեղինակը վերջում հարց ե տալիս, թե հարկավոր են արդյոք այդ արտադրական խորհրդակցություններն ընդհանրապես, ինթե գործն արդպես ե շարունակվելու:

Այս հոդվածը, (վորի միայն բովանդակությունն ենք տալիս) ժողովում կարդացվելուց հետո, յեթե ժողովի անդամներն իրենք զուսպ են բռնում և մտքերի փոխանակություն չի սկսվում, ժողովը զեկավարող ընկերը հոգինչ միջոցների պետք ե տալիս, որինակ թյունը բանվորների առաջարկները կատարի:

Ընդունենք ընկերներից մեկը՝ Ա. Ն. հայտարարում ե, թե վարչությունն անպայման պետք ե կատարի խորհրդակցության վորոշում:

Ները, հակառակ դեպքում անհրաժեշտ ե նրան պատասխանատություն կանչել:

Ընկ. Բ. Ն. մասնանշում ե, թե խորհրդակցություններն ավելորդ են, պետք ե բավականամարդ արտադրական հանձնաժողովներով: Ամենակարենը առաջարկները վարպետներն ու տեխնիքական կազմն ե անում, իսկ բանվորական մասսային, առհասարակի, չի հետաքրքրում այդ գործը:

Թղթակցության հեղինակը հայտարարում ե, թե իր գրածը ճիշտ չեն հասկացել, թե նա գեմ չի խորհրդակցություններին, այլ ընդհակառակը, չի առաջարկում: Նա կամեցել ե շատ ոգտակար ե համարում: Նա կամեցել ե միան ասել, վոր տվյալ պայմաններում խորհրդակցություններն ոգուտ չեն բերում:

Ընկ. Գ. Ն. հերթում ե հեղինակին: Խորհրդակցությունների առաջարկներն իրականացվում են: Գործարանի ձուլարանում կենսագործվել ե 2 առաջարկ, իսկ հարեւան բաժնում խորհրդակցության սուաջարկությամբ կարենը փոփոխություններ են մացվել: Դրանց մասին չի գրվել, վորովհետեւ ձուլարանում բանթղթակից չկա:

Ընկ. Դ. Ն. մի շարք փաստերով հաստատում ե, վոր խորհրդակցության նախագահ ընկ. Մ. Ն. իր դերումը չե, անտարբեր ե դեպի խոր-

հըրդակցությունների աշխատանքը, այն ինչ կան
բանվորներ, վոր չափազանց հետաքրքրվում են
այդ գործով, իսկ բջիջն ու գործարկումը միջոց-
ներ ձեռք չեն տանում նրանց ավելի սերտորեն
գործին կապելու:

Որինակ, փականագործ ընկ. կ.ն, վորին
բոլորն ել հարգում են, կենդանի հետաքրքրու-
թյուն և ցույց տալիս գեղի արտադրական
խորհրդակցությունների աշխատանքը և ինքն ել
ինչ, փորձված բանվոր ե, նրան պետք ե քա-
շել գործի մեջ:

Դեռ շատ կարծիքներ կհայտնեն և առա-
ջարկություններ կանեն ներկա լեզողները, բայց
այդքանն ել բավական ե՝ ցույց տալու համար,
թե այսպիսի մի զրույց վորքան ոգուտ կտա
պատի լրագրին և բանթղթակիցներին:

Վորոնը են այդ ոգուտները:

Որինակ՝ Ս.-ի յելութի առթիվ կարելի յե-
լնկերներին բացատրել կուսակցության և պրոֆ-
միության գիծն այդ հարցում, պարզաբանել,
ինչ փոխհարաբերություններ պետք ե լինեն ար-
տադրական խորհրդակցությունների և վարչու-
թյան միջև: Պետք ե հիշեցնել կուսակցության
վորոշմաները, թե խորհրդակցությունները վար-
չության տեղը չպետք ե բռնեն, չպետք ե ան-
տեղի կերպով խառնվեն նրա գործերին, պետք

ե նախազգուշացնել, վոր դա վասակար ե, թու-
լացնում ե վարչության պատասխանավությու-
նը և այդպիսով նվազում ե արտազրողակա-
նությունը:

Ընկ. Բ.-ի յելութի առթիվ պետք ե ապա-
ցուցել վոր նրա կարծիքը սխալ ե. խորհրդակ-
ցություններն արտազրական մեծ նշանակու-
թյուն ունեն, վոր բանվորական մասսաների
մասնակցությունը կարևոր ե, վոր նրանք խոր-
հրդակցությունների շնորհիվ կծանոթանան ար-
տադրական գործի կառուցվածքի հետ, աեխնի-
կալի, հում նյութերի հարցի, և այն, և պատ-
րաստություն ձեռք կըերեն ապագայում դեկա-
վարող պաշտոններ ստանձնելու համար: Պետք ե
բացատրել վոր պետարզյունաբերության և
բանվորների շահերն ընդհանուր են:

Յեթե շեղվելով բուն հարցից, խմբակի ան-
դամներն անցնում են այնպիսի հարցերի, վո-
րոնք դեկավարները չեն նախատեսել և չեն նա-
խապատրաստվել, պետք ե այդ նոր հարցերի
քննությունը հետաձգել հետեւյալ պարագմուն-
քին և նախապատրաստվել:

Մեր այս որբնակը ցույց ե տալիս, թե ձեռ-
նարկության կյանքից վերցրած մի փաստ վար-
քան հարուստ նյութ ե տալիս պարագմունքին՝
կարենը ընդհանրացումներ անելու, հետեապես,

և պարապմունքին մասնակցողների մասվոր հորիզոնն ընդլայնելու և քննվող հարցի նկատմամբ կուսակցության ու իշխանության վարած քաղաքականությունը պաշտպանելու համար:

Բացի այդ, նման զրուց պարապմունքը տալիս ե նաև մի շարք գործնական արդյունքներ:

Նախ անմիջականորեն պատի լրագրի, բանթղթակիցների աշխատանքի վերաբերմամբ խըսքակը կարող է հետևյալ գործնական վորոշումներն անել.

1. Արտադրական խորհրդակցությունների աշխատանքն աշխատացնելու և այդ աշխատանքով բանվորներին հետաքրքրելու համար, ավելի լուսաբանել խորհրդակցությունների աշխատանքը պատի թերթում:

2. Վորովինեակ մի շարք բանվորներ պարզ չեն ըմբռնում խորհրդակցությունների իրավունքներն ու պարտականությունները, մոտակա համարում մի հոդված զետեղել դրա մասին:

3. Թերթում ժամանակին լուսաբանել այն բոլոր միջոցները, վորանք ձեռնարկվել են խորհրդակցությունների առաջարկությամբ, Խմբկոլը պետք է հետեւի այդ առաջարկությունների իրականացնան: Ի իրականացումն ուշանայու դեպքում՝ դրանց մասին հիշեցնի վարչության:

4. Հանձնարարել խմբկոլին համապատասխան մի բանվոր զանել ձուլարանում և նրան տառչարկել, վոր թղթակցություններ տա այնտառից գործադրվող աշխատանքի նոր ձեռքի մասին:

5. Պատի թերթում հարց բարձրացնել, թե անհրաժեշտ ե խորհրդակցությունների նախագահ ընտրել այդ գործով հետաքրքրվող մի բանվորի չարց արձածել ընկ. Կ. ին գործի մեջ քաշելու:

Հիշալ պարապմունքի ժամանակ պարզվեցին մի շարք ընդհանուր բնույթ կրող հարցեր, այն ե.

1) Արտադրական խորհրդակցությունների նշանակությունը հասարակական կյանքի և արտադրության զարգացման համար:

2. Բանվորների սերտ մասնակցության նշանակությունն արտադրությունը կանոնավորելու գործում:

3) Մեր արգլունաբերության սոցիալիստական բնույթը: Այդ հիման վրա՝ ի՞նչ վերաբերմունք ունենան բանվորները դեպի իրենց գործարանը:

4) Ինչպես պետք ե կազմակերպել խորհրդակցության աշխատանքը:

5) Ինչպես պետք ե հասկանալ խորհրդակցությունների իրավունքներն ու պարտականությունները:

3. Ե՞րջ Պետք է ԱՆԻ ԽՄԲԱԿԼ, ՅԵՐԲ ԲՈՒ-
ԹԸՂԹԱԿԻՑԸ ՀԱԱԾՎՈՒՄ Է

Մեզանում բանթղթակիցը դեռ հտճախ է հալածանքի յինթարկում գործարանի վարչության կամ տեխնիքական կազմի կողմից։ Դըրա դեմք բավականին դժվար է պալքարել, վորովհետև հալածանքը, մեծ մասամբ, ըողարկված բնույթունի։ Հալածանքը զանազան ձեռվ ե արտահայտվում, նախած հանգամանքին այն ե.

1. Բանթղթակցին կրծատում են վոչ թե
այն պատճառով, վոր նա բանվոր է, այլ բացա-
ռապես նրա զբած թղթակցությունների պատ-
ճառով:

2. Բանթղթակցին անհիմն կերպով փոխառություն են ուրիշ աշխատանքի՝ հաճախ ավելի ցածր աշխատավարձով:

3. Հալածում են բանթղթակցին անհեթիթ
խծըծանքներով և չափազանց խստապահանջ են
լինում դեպի նա:

4. Բանթղթակցին դնում են ավելի պատասխանատու, բայց նրա ուժեղից վեր գործի, ծանրաբեռնում են բազմապիսի պարտականություններով և ապա նրան մեղադրում են, թե վատ ե աշխատում և անգործունյա իւ:

5. Բանթղթակցի զեմ զըգուուժ են անգիտակից բանվորներին և նրանց հետամատդ խա-

վերը համախակի սպասնալիքներ են ուղղում
նրա գեմ, փշացնում են նրա գործիքները, սուտ
վկայություններ են տալիս նրա մասին և այն:
Լատառում ե անսպես

Առաջ պիտի անի թղթակիցը, յերբ նկատում
ե, վոր վարչությունը կամ տեխնիքական աշ-
խատակիցները հալածում են իրեն։ Նա վոչ մի
դեպքում առանձին ինքնազլուխ քացեր չպետք
է անի և անմիջականորեն բարձր մարմիններին
չպիտի գիմի։ Այսպիսով նա իր գործը կձգձգի,
վորովհետեւ մյուս մարմինները, սիենույն ե, քըն
նություն պիտի կատարեն տեղական կազմա-
կերպությունների, խճբկոլի, կոմբջիջի միջոցով։

Իւզ խմբկոլի պարտականություն
ախց առաջ պարզեցեւ թե ճշշա ե, զոր հալա-
ծանք և տեղի ունենում. Սերտ ընկերական կա-
պերով մրացած խմբկոլը, զորի անդամները լավ
են ճանաչում իրար և տեղյակ են սիմբոնց աշ-
խտանիքին, ճիշտ կերպով կկարողանա պարզեց-
թե իր անդամ թղթակցին հալածում են նրա
հոգվածների համար, թե զոչ Բացի այդ, իրմ
բակը տեղյակ կլինի, թե զոր թղթակցությունն

և գժգոհություն պատճառել վարչությանը և էերբ ե սկսել հետապնդել բանթղթակցին։ Խմբկոլը պետք ե անհրաժեշտ բոլոր տեղեւությունները հավաքի ու նույն և առաջ դիմի կոմբջիջի, փարզործ կոմի ոգնության, աշխատի զործը տեղում, ձեռնարկության մեջ ողարշել։

Համկե (բ) ի կենտկոմի 1926 թ. ոգոստոսի 28-ի վորշումով, կոմի ջնները պարտավորեն պաշտպանել բանթղթակցին։

Համարհմկենտխորհն ել 1927 թ. գիտրվարի 23-ի մի շրջաբերականով պրոֆմիություններին պարտավորեցնում ե վոչ միայն պաշտպանել հալածանքի յենթակա բանթղթակցին, այլ և քրեյական պատասխանառվության կանչել հալածողին։

Պետք ե աշխատել վոր հիշալ կազմակերպությունները վոչ միայն քննեն զործը, այլ հաւածողին պատասխանառվության կանչեն՝ կուսակցական, արհմիութենական և գառական գծով։

Խորհրդավին որենսողությունն ամեն կերպ պաշտպանում ե բանթղթակցին։ Մեր բրեյական որենսգրքի մեջ մի շարք հոդվածներ կան, վորոնց հիման վրա կարելի յե հալածողի դեմ դառնաց անել և խիստ պատժի յենթարկել նըստարկել նըստարկել սկսած մի բանի ամսվա բանտարկություններին ու գատախաղին։ Ծալրանեղ զետքում, յեթե տեղական

թյունից, մինչև գնդակահարություն՝ նայած հայածանքի չափին ու յեղանակին։

Ավելորդ չեր լինի, յեթե խմբկոլը որենսգրքի համապատասխան հոդվածները քաղելով ժամանակ առ ժամանակ զետեղի պատի թերթում։

Սակայն բանթղթակցներն ել իրենց կողմից պետք ե բարեխիղճ լինեն. նրանք պետք ե բարեխղիճ լինեն, նրանք պետք ե զգան իրենց վրա գրված պատասխանառվությունը և անձնական ու յեսա իրական հաշիվսերով չպետք ե մոտենան գործին։ Բանթղթակցն ևս պատասխանառու յե դատարանի առջև, յեթե նա գիտակցորեն սխալ տեղեկություններ ե տալիս, զրպարտում ե կայ անձնական հաշիվներով ղեկավարվելով՝ անհիմն հարձակումներ ե գործում։

Ահա, այս բոլորը հաշվի առնելով, կոմի ջնն ու խմբկոլը պետք ե պաշտպանեն բանթղթակցին։ Իսկ յեթե նրանցից վոչ մեկը վճռական պաշտպանություն ցույց չտա, բանթղթակցը պետք ե կազ հաստատի տեղական տպագիր լըրագրի հետ, վորը պացքար կմղի նրան պաշտպանելու համար և միհնույն ժամանակ գործը կհասցնի կուսակցության և արհմիութենական վերաբաս կազմակերպություններին ու գատախաղին։ Ծալրանեղ զետքում, յեթե տեղական

հարձակումներից և իրոք լրջորեն, դործնականութեն քննազատի կազմակերպությունների և աշխատակիցների գործունելության բացերը, նաև ավելի համարում կունենա և նրան թշնամաբար չեն վերաբերվի:

Մի յերեսութեան պետք ե մատնանշել. բանթղթակիցն առաջափոր բանվոր լինելով, արդյունաբերության մեջ պետք ե որինակ հանդիսանա մյուսներին: Իսկ յեթե նա գործից հաճախ բացակայում ե, գործարանում աշխատանքը վատ է կատարում և վարչությունը նրան այդ պատճառով կրճատում է, վորպես վատ բանվորի, նրա կրճատումն որինական ե և խմբակը չպետք է հակառակի դրան:

Յերկու խոսք ել բանթղթակիցների փոխության գործից՝ հենց առաջին ահաջողության գեպօռում այդ գործը պետք է հասցնեն մինչև վերջը: Այդ ժամանակ բանթղթակիցը, տեսնելով, վոր կազմակերպությունը նրան պաշտպանում է, առանձին, ինքնագլուխ գործելով սիալ քայլեր չի անի:

Համենայն դեպս, խմբկոյն ու խմբակը չը պետք ե հրաժարվեն գործից՝ հենց առաջին ահաջողության գեպօռում այդ գործը պետք է հասցնեն մինչև վերջը: Այդ ժամանակ բանթղթակիցը, տեսնելով, վոր կազմակերպությունը նրան պաշտպանում է, առանձին, ինքնագլուխ գործելով սիալ քայլեր չի անի:

Բայց յերեմն պատի թերթի և բանթղթակիցի բուհած սիալ զի՞ն և լինում պատճառը, վոր որվում են հարաբերությունները Յեթե բանթղթակիցը խույս տա կոպիտ, վիրավորական

Այդ Փոնդը կազմվում է կամավոր մուծումներից և հասկացութիւներից, ուստի ամեն մի խմբութ պետք է իր լուծան մացնի բանթըթակիցների փոխոգնության Փոնդը:

4. ԲԱՆԹՂԹԱԿՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ ԲԱՑԵՐԸ ՅԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Բանթղթակիցներից վուանք կտրվում են բանվորական մասսայից, բանթղթակցական շըրջանից և իրենց՝ կուսակցական ղեկավարությունից վեր են դասում:

Յերեմն ել այս կամ այն բանթղթակիցը սկսում է գանգատվել, թե իրեն հալածում են, հուպ են տալիս: Կառկածամիտ լինելով նրան թվում ե, թե վարչության վերաբերմունքը թշնամական է ղեպի նա:

Թե՛ առաջին և թե յերկրորդ ղեպըում, խոսքը վերաբերում է խսկական բանթղթակիցներին, վորոնք վոչ անձնական, շահագիտական նպատակներով, այլ պարզապես իրենց իրավունքներն ու պարտականությունները չհասկանալով, մի շարք սխալների մեջ են ընկնում: Խմբակը պետք է աշխատի արդպիսիններին ուղիղ ճանապարհի վրա բերել, հասկացնելով նրանց սխալ-

ները, բացատրելով բանթղթակցական աշխատանքի ելությունն ու նպատակները:

Սակայն կան մի շարք անհարավուտ առրներ, կեղծ բանթղթակիցներ, վորոնք ներս լցկվելով բանթղթակիցների շարքերը անձնական նպատակներով վոչ մի միջոցի առջև կանդ չեն տառում իրենց հետին նպատակներն իրականացնելու համար: Նրանք բացարձակապես անբարեխիղճ հողվածներ են զրում, իրենց «հալածվող» են ձեացնում, կանգ չեն առնում նաև զրագողության առջև:

Այդպիսի ղեպը երում խմբակն առանց ապեկացության պետք է զուրս գցի իր շարքերից բանթղթակցի բարձր կոչումը շահագործողներին: Խմբկոյն ու խմբակն ամենից մոտ են կանգնած բանթղթակցին, բոլորից լավ են ծանոթ գործարանում պատահած անց ու զարձին, ուստի նրանք պետք է հենց իր բնում խեղգեն ամեն մի տգեղ քայլ, թուզ չտալով, վոր նա զարգանա, բանթղթակցի անունը վարկաբեկիչ չարիք դառնա: Խմբկոյն ու խմբակը պետք է աշխատեն բանթղթակիցների շրջանում նկատվող բացասական յերեսությունները վերացնել ընկերական ներգործումով, ցույց տալով սխալվողի վարժունքի մնանակարությունը, իսկ անուղղելի, վատաբարու, կեղծ թղթակցի նկատմամբ պետք է զիմել ա-

վելի խիստ միջոցների, այն եւ չզետեղել նրա
թղթակցությունները պատի թերթում, պատաս-
խանաւումության կանչել նրան ոլոսվմիւթենա-
կան և կուսակցական գծով (յէթե կուսակցա-
կան ե) հաղորդել նրա անվանել վարքագծի մա-
սին տեղական տպագիր թերթին և դուրս դցել
նրան բանթղթակիցների շարքերից:

Բանթղթակիցների շարքերն այդպիսի ան-
հարազոտ տարրերից մաքրելու պարտականու-
թյունը նախ և առաջընկնում ե իրենց՝ բանթղթ-
ակիցների վրա: Նրանք պետք ե աչալուրջ
հսկեն և իրենց շարքերից դուրս շպրտեն այդպի-
սիներին:

IV.

ՊԱՏԻ ԼՐԱԳՐԻ ՅԵՎ ԲԱՆԹՂԹԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԱԿԱՅՆԱՅՈՒՄԸ

1. ԴԱՏ ՊԱՏԻ ԼՐԱԳՐԻ ՎՐԱ

Պատի լրագրի շուրջը մասսայական պրակ-
տիկ աշխատանք ստեղծելու լավ միջոցներից
մեկն ել ցուցադրական դատերն են: Բայց յէրբ
կարելի յե նուան դատեր կազմակերպել:

Դիցուք հիմնարկում պատի լրագրի աշխա-
տանքները կազմում են, թերթն անհետաքրքիր ե,
բանվարները չեն կարգում, հեղինակություն
չունի և հիմնարկի ղեկավարը հաշվի չի առնում
նրա նկատողությունները: Նման զեպքերում
հնարավոր ե դատ կազմակերպել, վորը նպա-
ակ պիտի ունենա աշխատացնել լրագրի աշ-
խատանքները, բանվարների ու աղմինիստրա-
ցիայի ուշադրությունը գեղի թերթը զարձնել,
թերթի շուրջը նոր թղթակիցներ խմբել և ացն:

Մի այլ խմբում խմբազրական կոլեգիան
ցանկանալով ընթերցողներին ծանոթացնել թըդ-
թակցական աշխատանքների ու նրա գործնական
հետեանքների հետ—այս անգամ դատ ե կազմա-
կերպում թղթակցի վրա:

Յերբորդ հիմնարկում խմբկոլեզիան ավելի
նեղ նպատակ ե գնում իրեն—բանվարների մեջ
ընթերցասիրություն զարթեցնելու և նրանցից
նոր թղթակիցներ առաջ քաշելու համար դատ և
կողմանկերպում չընթերցող բանվարի վրա։ Դատ
կազմակերպելու համար, ամենից առաջ պետք
ե գատական կազմ, մեղադրող, պաշտպան և երս-
պերտ ընտրել։ Դատարանի կազմը սովորաբար
3—5 մարդուց ե ընտրվում Դատարանի նախա-
դահ պետք և ընտրել այնպիսի ընկերոջ, վորը
ծանոթ և հասարակական դատերի, բանզուղ-
թղթակիցական շարժման հետ։ Առենակալներին
պետք ե ընտրել դատի ունկնդիր բանվարներից՝
ունկնդիրների առաջարկով։ Պաշտպանի և մե-
ղադրողի գերը կարելի յե հանձնել տեղի տպա-
գրական թերթի խմբագրական ներկայացուցչին,
բջիջի քարտուղարին կամ մի այլ ակտիվ բան-
վորի։

Վկաները պետք ե լինեն թե՛ մեղադրողի և
թե մեղադրյալի կողմից։ Բոլոր մասնանշած ըն-
կերներին պետք ե ընտրել դատից առնվազն մի
շաբաթ առաջ, վորպեսզի նրանք նախորոք հա-
փաքիւլով, կարողանան խորհրդակցել դատի ըն-
թացքի մասին։

Բայց պետք ե այնպիս անել, վոր այդ ըն-
կերները դատը ինսցենիրովիալ վեր չածեն,

թատրոնի բնույթ չտան, նախորոք դրելով իրենց
ասելիքներն ու վորոշումները, վորովհեակ զա-
կանգարի հարցի կանոնավոր լուսաբանումը ու
լուծումը։ Նախորոք անհրաժեշտ է դատին մաս-
նակցողների խորհրդակցություն հրավիրելով,
մշակել մեղադրական ակտը, ուր պետք ե ման-
րամասնորեն թվել այն բոլոր թերությունները,
վորոնց մեջ մեղադրվում և թերթը։

Բերենք մեղադրական ակտ կազմելու մի
որինակ։ Դափանի պղնձահանքերի «Շախտոր»
պատի լրագրի դատի ժամանակ հայտնաբերվել
են հետեւյալ մեղադրանքները։ —

1. Մասսաներից կտրված լինելը, վորն ար-
տահայտվում ե բանթղթակիցների խմբակի բա-
ցակայությամբ։

2. Թույլ կապը տպագրական թերթերի և
մասնակորապես «Կարմիր Ռանչպար»-ի հետ։

3. Այն, վոր յերբեք աղմինիստացիան չի
պատասխանել թերթում բերված թերություն-
ների մասին յեզած թղթակցություններին։

4. Յերկար ու անհասկանալի հոգվածներ
են զետեղվում թերթում և

5. Նկարներ ու ծաղրանկարներ չեն լինում
թերթում։

Նման մեղադրական ակտեր հանելիս չպետք
ե հարցին սուր բնույթ տալ վորը թերթի հա-

մար բացասական նշանակություն կարող ե ու-
նենալ, այլ պետք ե աշխատել հարցերը բարե-
կամաբար դնել և բարեկամաբար լուծել:

Յեթե թերթի բացերի մասին արտահայտ-
վել ցանկացողներ կ'ոն, նրանց ևս պետք ե ձայն
տալ: Դատարանի վճիռը պետք ե հաստատի
ներկա յեղողներ կողմից: Դատավճռի մեջ պետք
ե մասնանշել, թե ինչպիսի բացեր են յեղել
թերթում, և ինչ ճանապարհով պետք ե վերաց-
վեն:

Վորպեսզի թերթի դատին շատ մարդ մաս-
նակցի, դատից հետո կարելի յե ներկայացում,
յերեկութիւն կամ համերգ կազմակերպիլ:

2. ԲԱՆԹՊԹՍԿՑԻ ԱՆԿՑՈՒՆ

Ծայր առած թղթակցական շարժմանն ըն-
թացք տալու համար կազմակերպվում են թբդ-
թակցական անկյուններ: Թղթակցի անկյան նը-
պատակն ե թղթակիցներին ծանոթացնել պատի
լրագրի ու թղթակիցների խմբակների աշխա-
տանքների հետ

Սովորաբար թղթակցի անկյունը բաղաքում
լինում ե զործարանի ակումբին, իսկ զյուղում
խրճիթ-ընթերցարանին կից: Այդ անկյուններն
այնպիս պետք ե սարքել վոր աչքի ընկնեն և

ակումբ կամ խրճիթ մանողին խոկոյն զեղի ի-
րենց քաշեն:

Եյժմ աեսնենք. թե ինչպես պետք ե կազմ-
ված լինի այս անկյունը և ինչպիսի նյութեր
պետք ե լինեն այնտեղ:

1. Թղթակցի անկյունն ամենից առաջ
պետք ե ցուց տա պատի լրագրի ու թղթակցից-
ների աշխատանքը. զրա համար հանձնարարվում
ե այդ անկյունում ունենալ, ա) համեմատության
համար թերթի առաջին ու վերջին համարնե-
րից մեկը, բ) գիտակամաններ, վորոնք ցուց
կը տան թղթակցների, թղթակցությունների ու
խմբակի անդամների թվի աճումը և այն, գ)
կարձ ու պարզ գրված թերթի ու խմբակի պատ-
մությունը, դ) թերթի արված նկատողություն-
ների հետեանքով ունեցած հաջողությունների
մասին մի հոգված, է) մի տետր, փորի մեջ պի-
տի տեղափորել ավալ հիմնարկի մասին յեղած
տպագրական թերթերի հոգվածները և այն,

2. Անկյունում պետք ե ունենալ այնպիսի
նյութեր, վորոնք ցուց են տալիս, թե ինչպես
պետք ե զրել պատի թերթում. – ա) մի կարձ
հոգված, վորով պիտի բացատրվի, թե ինչպես
և ինչի մասին պիտի զրել պատի թերթում, ուր
և ում հանձնել յեղած նկատողությունները, բ)
թղթակցության վիճակը մինչև թերթում լույս

տեսնելը. ոչ յէ արապիս և արվում. — մեծ թերթի վրա կողնուում են թղթակցութիսն ոկրի ձեռագիր, առաջ ուղղված թղթակցությունը և արդին ապված թղթակցությունը, դ) Արդարադատութիան ժողովրդական կոմիսարիատի և Գերազույն Դատարանի շրջաբերականները թղթակցներին հարածելու և նրանց պաշտպաննելու մասին. դ) Այս գրքերի ցուցակը, վորը հանձնարարվում է կորպար, ցույց տալով թե դրանցից ինչպիսի ները կան ակումբի կամ խրճիթի գրադարանում:

3. Անկյունում պետք է կանոնավոր կերպով խմբակի ժողովների, տեղական ապագրական թերթի թղթակցների, մամուլի յերեկոների ու նման աշխատանքների մասին հայտարարություններ կախել:

Բացի գրանից, թղթակցի անկյունում կարելի յէ որինակի համար կախել նյութեր, վորոնք պատկերում են բանվորական մամուլի պատմությունը, յենթաշեփ գրուղթղթակցների կամ զինթղթակցների աշխատանքը, բանթղթակցների շարժումը և այլն:

Պետք է աշխատել, վոր այս բոլորը չծանրաբեռնեն անկյունը, այլ նրանց պետք է այնպես գասափորել, վոր նրանք ճաշակով ու աչքի ընկնող լինեն և ներս մտնողի ուշադրությունն իրենց վրա հրավիրեն:

3. ԶՐՈՒՅՑՑ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՀԵՏ

Աշխատանքից հետո բանվորները վորոշ չափով ազատ ժամեր են ունենում: Նրանք հաճախ խոսում են որվա անց ու գարձի, գործարանալին նորությունների մասին: Խմբագրական կողեզրի անդամները, կամ բանթղթակցները պետք ե այս հանգամանքից ոգտվելով խոսք բացեն պատի լրագրի մասին:

Պատի լրագրի մասին խոսք բացելիս պետք է սկսել նրա մեջ յեղած նկատողություններից: Բանվորներն այդ բանով հետաքրքրվելով կսկսեն կարգալ թերթը և արժեքավոր տեղեկություններ տալ այդ գործի շուրջը, վոր հայտնի չեղողեզրին ու թղթակցին և այսպիսով հնարավոր կլինի կանոնավոր կերպով պարզել լուսաբանել վորեն խնդիր:

Հաճախ անզբազետ բանվորները ցանկանում են վորեն նկատած բացի մասին գրել պատի լրագրում, բայց հնարավորություն չունեն: Նրանց պետք է ոգնության համար բանթղթակցը, գրի, ձեռակերպի նրա մտքերը, կարգա բանվորի մոտ, հավանությունն առնի ու հանձնի խմբկողին պատի լրագրում դեսկվերու համար:

Կարելի յէ բանվորների համար զուտ թըղթակցական բնույթ կրող զբույցներ կազմակեր-

պել ինչպես - «ինչու պետք ե զբել պատի լու
գրում», «ինչ գրել», «ինչպես զբել» և նման
նյութերի շուրջը:

Խմբագրական կողեզիան այդ զրույցների
ժամանակ կարող ե քննության առնել բանվար-
ներին հուզող կարեոր խնդիրները, փորոնցով
շահագրգովելով՝ բանվորները հեշտությամբ կհա-
մախմբվեն թերթի շուրջն ու դրանցից շատերն
ել նրա թղթակիցը կդառնան:

V.

ԹԵՐԹԻ ՅԵՎ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԻ ԽՄԲԱԿԻ ԱՇԽԱ- ՏԱՆՔԻ ՀԱՇՎԱՌՈՒՄՆ ՈՒ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Պատի թերթի և թղթակիցների խմբակի
աշխատանքների հաշվառումը չափագանց կարե-
վոր նշանակություն ունի: Առանց աշխատանքի
կանոնավոր հաշվառման դժվար ե զեկավարել
ու կանոնավորել թղթակցական շարժումը,
հայտնաբերել նրա բացերն ու հաջողություննե-
րը և թղթակցական շարժման պարզ պատկերը:

Ինչպես պետք ե տարվի հաշվառումը: Պա-
տի թերթի և թղթակիցների խմբակի տարած

աշխատանքների հաշվառումն հիմնական և ամե-
նակարևոր ձեւը պիտի հանդիսանա հետեւալը:

- 1) Խմբակի աշխատանքներին ժամանակցող-
ների ու պատի թերթում գրողների ցուցակը,
- 2) Խմբակային աշխատանքի որագիր, 3) պատի
թերթի համար ստացվող թղթակցությունների
զրանցումը, 4) պատի թերթի համարների և
5) թղթակցությունների սեփազրությունների
պահպանումը:

Թղթակիցների յուրաքանչյուր խմբակ ան-
պայման պետք ե խմբակում ու պատի լրագրում
աշխատաղների ցուցակն ունենա: Այդ ցուցակի
մեջ պետք ե մտցնել և այն նոր ընկերների
անունները, փորոնք մասնակցում են ժողովնե-
րին ու թղթակցում թերթին: Այսպիսի ցուցակ
անհրաժեշտ և ունենալու իմանալու համար, թե
թղթակիցներն իրենց սոցիալական գրությանը
կուսակցականությամբ իրենցից ինչ են ներ-
ու կուսակցականությամբ իրենցից են նաև աշխատանքների
կայացնում, նրանք լերբվանից են մասնակցում
խմբակի և թերթի աշխատանքներին և այլն:
Ստորեւ բերում ենք խմբակում մասնակցողնե-
րի ու պատի թերթում գրողների ցուցակի որի-
նակելի ձեւը:

Անոնց Ազգանուն Հայրանուն	Պարտաս առան (յեթ, բախունյար) և լիք- րեպ ինչ դըմաքընձնան	Ժամանակակից պահանջանակ ու պահանջանակ ու թերթունում	Օնկովանի հայ- ու պահանջանակ ու պահանջանակ ու թերթունում	Սահմանական պահանջանակ ու պահանջանակ ու թերթունում
Դիմում	Բարձրացած առան (յեթ, բախունյար) և լիք- րեպ ինչ դըմաքընձնան	Բարձրացած առան (յեթ, բախունյար) և լիք- րեպ ինչ դըմաքընձնան	Առաջնական պահանջանակ ու պահանջանակ ու թերթունում	Տարբանական պահանջանակ ու պահանջանակ ու թերթունում
1.	Պարտաս առան (յեթ, բախունյար) և լիք- րեպ ինչ դըմաքընձնան	Պարտաս առան (յեթ, բախունյար) և լիք- րեպ ինչ դըմաքընձնան	Պարտաս առան (յեթ, բախունյար) և լիք- րեպ ինչ դըմաքընձնան	Պարտաս առան (յեթ, բախունյար) և լիք- րեպ ինչ դըմաքընձնան
Դիմում	Պարտաս առան (յեթ, բախունյար) և լիք- րեպ ինչ դըմաքընձնան	Պարտաս առան (յեթ, բախունյար) և լիք- րեպ ինչ դըմաքընձնան	Պարտաս առան (յեթ, բախունյար) և լիք- րեպ ինչ դըմաքընձնան	Պարտաս առան (յեթ, բախունյար) և լիք- րեպ ինչ դըմաքընձնան

Այս ձեփին կարիք է եղած դեպքում կարելի
է ավելացնել նոր սկզբաներ լիւս որինական

կարելի լիւ մի որոնակ ավելացնելով զրել թէ
թղթակիցը կանոնավոր ե զրում, թէ թղթակ-
ցությունը պատահական լինուլի ե կրում և սպն:

Ուշ մի զեղբում այս ցուցակն անկետապի
չպետք ե վերածել, վորը լինում են թղթակից-
ներն իրենք: Ցուցակը աւարվում ե զուտ հաշ-
վառման նպատակով, վորը լրացնում ե խմբա-
գրական կոլեգիալի անդամներից մեկը: Ինըն
ըստ ինքան հասկանալի լիւ, վոր ցուցակը պահ-
պում ե խմբագրական կոլեգիալում և գրքարա-
նալին կազմակերպությունները նրան նայելու
կամ ծանոթանալու համար պահանջելու իրա-
վունք չունեն:

Բացի թղթակիցների այս ցուցակից ան-
հրաժեշտ ե ունենալ և խմբակալին աշխա-
տանքների ու նրանց աշխատանքների բնորոշ կող-
մերի մասին ե գրվում:

Որպես—դա մի տեսք ե, վորի մեջխըմ-
բակի ու խմբագրական կոլեգիալի միացյալ
նիստերի և նրանց աշխատանքների բնորոշ կող-
մերի մասին ե գրվում:

Բացի այդ, այսական գրվում են նաև բջի-
ջի ու Գործարանալին Կոմիտեի պատի թերթի
մասին հանած ու մոռացված վորոշումների,
թղթակիցների լավ ու վատ փոխարարերու-
թյունների մասին և այլն: Որինակով ցույց
տանք, թե ինչպես պետք ե կազմել որպես:

Առենից առաջ նորից պետք է առել, վոր սրադիրը կազմփում է թղթակիցների խմբակի և խմբագրական կոլեգիայի միացյալ նիստերում։ Որպիրը սովորական արձանագրության նման չի կազմփում «լսեցին», «վորոշեցին» սյունակով, այլ կենդանի ձևով, ինչպես շարադրություն։

«25 հուլիսի 1927 թիվ։ Խմբակի այսորվա նիստին մասնակցում են 10 հոգի։ Քննվում եր բանզուղթղթակիցների համաժխութենական 3-րդ խորհրդակցությանն ընկեր Բուխարինի «Կուսակցության ղեկավարության մասին» արած զեկուցումն ու հանգած բանաձեր։ Ընկ. Գրիգորյանն ընթերցում եր զեկուցման կարեռ մասերը միաժամանակ կարգարով բանաձեի համապատասխան կետերը։ Բոլոր բանթղթակիցներն արտահայտվեցին։ Հատուկ հետաքրքրություն առաջացրեց բանթղթակցական կազմակերպություններին սպանացող վատանգի հարցը, և այն, թե ինչպես պետք է գործնականորեն առնել բանթղթակիցների ուղիղ ղեկավարությունը։ Մեր խմբակում կուսակցությունից մեկուսանալու վատանգ, ինչպես և անհարազատ արքեր չկան։ Բայց գործնականում մեր հարաբերությունները կուսրջիջի հետ շատ անորմալ են։

1) Մինչև հիմա բջիջը պատասխանառու խմբագիր և նշանակել ագիտալուպ կազմակերպ՝ չին։ Ընկերը չափազանց ծանրաբեռնված է և չին։ Ընկերը հայտարարեց, վոր իր կարծիքով թերթը ինքը հայտարարեց, վոր իր կարծիքը չի դուռը, պատասխանառու խմբագրի կարեք չի դուռը, քանի վոր կոլեգիայի անդամները շատ համերաշխ են աշխատում։

2) Վաչ կուսրջիջի քարուղարը, վաչ ել բջիջի ակտիվ անդամները պատի լրազրում չեն գրում, վորով և բջիջի կանքը լավ չուսաբան վում։

3) Բջիջը չի նպաստում գործարկոմի հետ լավ փոխհարաբերություններ հաստատելուն, վորը ձգտում է իր ձեռքը վերցնել պատի թերթի ղեկավարությունը, վորովհետեւ նրա հրատարակման փողն ինքն է տալիս։ Գործարանույին կոմիտեն պահանջում է, վորպեսզի թերթի ճակատին անպարհան գրվի «Որդան գործարանային կոմիտեի»։

4) Կուսակցության բջիջում յերբեք չի քննվել պատի թերթի ինդիքը։

Խմբակն ընկ. ընկ. Գրիգորյանին և Խաչատրյանին հանձնարարում է այս բոլոր խընդիրների մասին խորհրդակցել կուսրջիջի քարտառուղարի հետ և միջացներ ձեռք առնել նկատված թերությունները վերացնելու։

Արտգրում անպայման պիտի զրել և խըս-
բակի վօրոշման կիրառման մասին։ Այսպես.

«28 հուլիսի 1927թ. ընկ. Գրիգորյանն ու
Խոչտարարակ խոսել են կուսրջիջի քարտուղար
ընկ. Քոչտարյանի հետ և ծանոթացրել Համա-
միութենական բանգյուղթթվակիցների Յ. Րդ
Խորհրդակցությունում կուսղեկավարության մա-
սին հանած վորոշութիւներին։ Ընկ. Քոչտարյանը
համաձայնվեց խմբակի վօրոշման հետ և առա-
ջարկեց այդ հարցերը գնել բջիջի բյուրով նիս-
տին, իսկ մոտակա բջիջի գոնքաց նիստում
գնել պատի թերթի հաշվետվությունը։»

Բջիջի բյուրով և կուսակցության բջիջի
գոնքաց նիստում խմբագրական կոլեգիակի զե-
կուցման ըննության մասին ևս պետք եր զրել
որագրում։ Մի խոսքով այն, ինչ կարեոր ու-
նշանակալից ե պատի թերթի և խմբակի աշխա-
տանքների ընթացքի համար պետք ե արձանա-
գրել որագրում։ Մի այլ որինակ, մի գործարա-
նի զիրեկտոր բոլոր ցեխների գարիչներին հրա-
մայել ե պատի թերթում յեղած բոլոր նկատո-
ղություններին անժիջապես պատասխանել, բա-
ցարություն տալ խմբագրական կոլեգիան
որագրում արձանագրում ե, վոր այդ հրամանը
իրենց միջնորդությամբ ե արված։

Դաշտակ խմբագրական կոլեգիաներ որա-

գրում բանվորներից ստացված թղթակցություն-
ների մասին զրում են— «տպագրել», «քննու-
թյուն կատարել» «չտպել» և այն։ Այսպես
վարվելու կարիք չկա. ստացած նկատողու-
թյունները կոլեգիայի անդամների մեջ մեծ վի-
ճաբանության առարկա յեւ գառնում։ Բացի այս
պետք ե առանձին հաշվառում կատարել թեր-
թում զետեղելու համար ստացված նկա-
տողությունների մասին. այս անհրաժեշտ
ե հետազյում պատի թերթի աշխատանքը
գնահատելու համար, թե նա վորքանով ե բան-
վորական մասսաների հետ կապված յեղել։

Բերենք նկատողությունների հաշվառման
որինակելի ձև։

Թղթակցություն	Ամփո	Նկատողությունների պահպանությունը	Հեղինակի կամ հանձնը՝ վաճառքի համար	Տպագրված են կամ հաշվարքած կամ հանձնը՝ վաճառքի համար
Ա. Ա. Ա. Ա.	Ա. Ա. Ա. Ա.	Ա. Ա. Ա. Ա.	Ա. Ա. Ա. Ա.	Ա. Ա. Ա. Ա.
Ա. Ա. Ա. Ա.	Ա. Ա. Ա. Ա.	Ա. Ա. Ա. Ա.	Ա. Ա. Ա. Ա.	Ա. Ա. Ա. Ա.

Վորոշ ժամանակ անցնելուց հետո խմբկոլլ
կարող ե խոկույն հաշվել թե քանի նկատողու-
թյուն ե ստացված, նրանցից քանին են ստա-
գրված, քանիսը չե, քանիսի տոթիվ քննություն
ե կատարել և ինչ հետևանք ե ունեցել։

Հաշվառման հետեւալ անհրաժեշտ ձեզ պատի թերթի համարների պարագագիքի կերպով պահելն եւ: Շատ քիչ խմբակ կպատահի, վոր ունենա պատի թերթի բոլոր համարները, սկսած առաջին համարից: Սովորաբար թերթը մի շաբաթ կախելուց հետո պատրաստվում ե, հետո գցում են մի անկյուն, վորաեղ նա փոշիների մեջ ել կորչում ե: Վորպեսզի կարողանանք պատկեր կազմել ավել պատի թերթի մասին, պետք է մեր ձեռքի տակ լինեն նրա բոլոր համարները, վորը և կներկայցնի թերթի պատմությունը, նրա աստիճանական լավացումն և նրա կապի ամրությունը մասսաների հետ:

Ցանկալի յե ունենալ նաև նկատողաթյունների սեփականաթյունները, վորը պահվում է առանձին գործի մեջ:

Ահա խմբկոլների ու թղթակցական խմբակների աշխատանքների հաշվառման ամենաանհրաժեշտ ձեռքը: Շատ ոգտակար դործ արած կլինի խմբակը, յեթե կարի և մի ալբոմում հավաքի տպագրական թերթերում իր ենց գործարանի մասին յեղած բոլոր թղթակցությունները:

Ալբոմն այսպես է ոգտարասավում: — Յուրաքանչյուր կարած հոդված կպցնում են մի

թղթի վրա, այդ թղթերը հավաքում մի շատկի մեջ, վորի մեջ և 10-15 թերթ եւ ավելուգ պահվում ե՝ նոր հոդվածներ կպցնելու համար: Յուրաքանչյուր հոդվածի տակ գրվում է, թե վորակ, յերբ, ինչ ժուրնալում կամ թերթում, նրա վոր համարում ե լույս տեսել հոդվածը:

Ալբոմի շապիկը ցանկալի յե կարտոնից և աշխատել, վոր գեղեցիկ լինի: Թղթակցային աշխատանքի վորակի հաշվառման նպատակով միանգաման նպատակահարմար ե թղթակիցներին հանձնարարել սեփական արխիվ ունենալու:

Թղթակցին անհրաժեշտ ե ունենալ իր բոլոր նկատողությունների սեփականաթյունները և այնտեղ նշանակել թե յերբ և ուր են ուղարկված նրանք: Հետո այդ սեփականաթյուններին պետք է կպցնել տպագրակած թղթակցությունը, զրելով թե յերբ և վոր թերթի, վոր համարում է այն տպագրվել, տպա հենց այդպես ել պետք է զրել, թե ինչ է նախաձեռնված այդ թղթակցության համար և ինչ հետեւանքներ ե ունեցելան:

ԿԱՊԸ ՏՊԱԳԻԲ ԹԵՐԹԵՐԻ ՀԵՏ

Յերբ պատի թերթի խմբագրությունը կատեւնենում տպագրական վորեւ թերթի հետ, նրա աշխատանքներն ավելի հեշտութիւնը ու հաջողությամբ են ընթանում: Այս գործն ավելի

հեշտանում ե, յեթե տեղական տպագրական թերթում հիմնարկի բանթղթակիցներից թղթակցում են: Նրանք հաճախ կարող են անցնել տպագրական թերթի խմբագրություն, իրենց հետագա աշխատանքների մասին ցուցմունքներ ստանալու, կարող են մասնակցել բանթղթակիցների ժողովներին: Նրանց ամենաառաջին պարտականությունն ե իրենց խմբկոլին ու խըմբակին տեղեկացնել այն բոլորի մասին, ինչ վոր կարող ե արդյունավետ լինել իրենց աշխատանքի համար, ծանոթացնել այն բոլոր խնդիրների հետ, վորոնք առաջազրում ե թերթը:

Տպագրական թերթերը պատի թերթերի աշխատանքների համար սեմինարիաներ կամ դասընթացներ են կազմակերպում, վորոնք նպատակ ունեն բանթղթակիցներին ծանոթացնել բանթղթակցական աշխատանքների հիմունքների հետ, նրանց սովորեցնել ձիշտ և լավ աշխատել: Սովորաբար յուրաքանչյուր խմբակ մի կամ մի քանի բանթղթակից ե ուղարկում այդ դասընթացները: Խմբկոլը պետք ե հետեւ, վոր այդ ընկերները կանոնավոր հաճախեն և իրենց ստացածը սովորեցնեն իրենց ընկերներին:

Ավելի կարևոր նշանակություն ունեն բանթյուղթղթակիցների խորհրդակցությունները, վորոնք հրավիրվում են տպագրական թերթերի

կողմից: Խորհրդակցությունները վորոշում են թե մոտագայում ինչ պիտի անել և չափաղանց անհրաժեշտ ե, վոր խմբկոլը ժամանակին նախապատրաստի այն բոլոր հարցերը, վորոնք պարզ չեն և հարուցվելու լեն խորհրդակցության ընթացքում:

Վորպեսզի գյուղթղթակիցների խորհրդակցությունն իրոք վերածվի բանթղթակցային աշխատանքի դպրոցի և այնտեղ քննության առնվեն գործնական թղթակցային հարցեր, խմբկոլները կարող են և պետք ե զիսեն տպագրական թերթի խմբագրություններին իրենց հետաքրքրող հարցերը խորհրդակցության ըննության նյութ դարձնելու:

Կարենը և և այն, վոր պատվավորներն այդ հարցերը հարուցելու համար նախապատրաստված լինեն: Դրա համար անհրաժեշտ ե, վորպեսզի թղթակիցների խմբակը նախ խորհրդակցությանը գործունյա ու լուծ ընկեր ուղարկի և յերկրորդ՝ լավ մտածի, թե աշխատանքի ինչ բնագավառներում են դժվարանում, վոր հարցերը պարզ չեն և այն, վորպեսզի պատվամակորն այդ հարցը կարողանա առաջազրել խորհրդակցությանը լուծելու համար: Բացի այդ, մեր պատվամակորները դատարկ ձեռքերով են խորհրդակցության գնում, նրանք իրենց հետ

թյունները հաճախ հրահանգնամակները են զլբում խմբակներին և թղթակիցներին զործնաշկան ցուցմունքներ են տալիս, ինչպես խմբական ցուցմունքներ են տալիս, ինչպես խմբակների ձևութեամբ, վորոնք շատ հաճախ պետք են դալիս խորհրդակցությանը:

Պակաս նշանակություն չունեն պատի թերթերի ցուցահանդեսներն ու մրցությունները: Այս կերպ խմբկոլներն ու խմբակները մյուս թերթերից կարողանան ընդորինակել այն բոլոր գնահատելին, ինչ ձեռք են բերել այդ թերթերը:

Խմբագրական կոլեգիան պետք է աշխատի ցուցահանդեսին ուղարկել իրենց հաջող համարներից, բայց վոչ թե այդ նպատակով պատրաստված հատուկ թերթը, վորը վոչ վորի կողմից չի կարող գնահատվել:

Պետք է նկատել, վոր ընդհանրապես այդ ցուցահանդեսներին գնում են միայն խմբագրական կոլեգիայի անդամները, իսկ թերթում զըրող թղթակիցները իբրեւն չեն ել իմանում, վոր այս ինչ տեղ ցուցահանդես է կազմակերպվել Խմբկոլները պետք է աշխատեն անպարհանց ցուցահանդեսին մասնակից անել բոլոր թղթակիցներին, վորոնք այնտեղ շատ բան ունեն սովորելու:

Բացի այս, տպագիր թերթերի խմբագրու-

թյունները հաճախ հրահանգնամակները պիչ ոգուաներ չեն կտրող տալ, միայն պետք է կարողանալ ոգագործել: Խմբագրական կոլեգիան նամակն ստանալով այն ընհության և գնում խմբագրական կոլեգիայի նիստին, կամ թղթակիցների կամ վորոշում նրա կիրառման հստակեցնելու վորություններն իրենց պայմաններում:

Մասնավորապես բաղաքից հեռու ընկած զործարանների բանթղթակիցներն իրենք պետք է տպագրական թերթերից պահանջեն, վոր նման նամակներ հաճախակի ուղարկվեն, վորոնք շատ են նպաստում զանազան հարցերի լուսաբանմանը: Տպագրական թերթերն ուժիւմ ներածին չափ խմբակներին ոգնում են և, զեկուցողներով բանթղթակիցն աշխատանքների կոնսուլտացիա լին կազմակերպում, թերթում բաց են անում «բանգուղթղթակիցի անկյուն», վորտեղ տպվում են խմբկոլներին ու խմբակներին աըրգող հրահանդչական ցուցմունքները և ալին:

Յեթե հրմանական բանթղթակիցների հարաբերությունները զործարանային կազմա-

կերպությանների հետ կանոնավոր չեն և աեւ զում վոչինչ ճնարավոր չի յեղել անել թղթակիցին հոլածանքից պաշտպանելու համար, — խըմբագրական կոլեգիաները կարող են դիմել տըպագրական թերթերին, վորոնք կուղարկեն իրենց աշխատակցին, սա արդ մասին կգրի թերթում, հարց կհարուցի համապատասխան կազմակերպությունների առաջ։ Առհասարակ պատի թերթի խմբագրությունը բոլոր մութ հարցերով կարող ե դիմել տպագրական թերթի խմբագրությանը, վորը հանգամանորեն կպարզաբանի այդ հարցերը։

Պետք ե ասել, վոր թղթակցային խմբակները մի վարեւ տպագրական թերթի թղթակիցների խմբակ չեն հանդիսանում. միևնույն խմբակում կարող են լինել զանազան թերթերի թղթակիցներ և այսպիսով, խմբակը շահում է, վորովինետե խմբակի անդամները զանազան թերթերին թղթակցելով կապվում են շատ թերթերի հետ, և ցուցմունքները շատ և բազմակողմանի կարող են լինել։

Այժմ խոսենք տպագրի թերթերի տարածման մասին։ Դեռ համամիութենական բանգուղթթղթակիցների յերկրորդ խորհրդակցությունը կարականապես հայտարարեց, վոր թղթակիցները տպագրական թեր-

թերթի գործակալները չպիտի գտանան և զբացեցնեն նըլտնց լատանուրդակարգությունը։ Բայց և այնպես վարոշ խմբագրություններ ձգտում են թղթակիցներին կազել իրենց թերթի տարածման հետ։ Յերբեմն հիմնարկում զանազան թերթերի տարածման համար լարված պայքար ե մղվում, վորին մասնակցում են և խմբագրական կոլեգիաները և թղթակիցները։ Յյո պայքարը շատ վատ և անդրադառնում բանթղթակցային ուշխատանքի վըրա։ Այդ թերթերը ձգտում են շահագրգուել թրթակիցներին զանազան տոկոսներով, բանթղթակիցներին աշխատում են համոզեր, վոր գանըանց «հասարակական պարտականությունն ե», «վոր գա ուղղակի նրանց գործն ե» և այլն, և այլն։ Բավական ե, վոր թղթակիցը թերթ տարածելու համար տպագրական թերթից վարեկնվեր ստանա, իսկ գա միևնույն ե՝ լինի փողի, զրականության, թղթի կամ այլ միջոցով, բանվորական մասսաներն այլես գագարում են նրան վորպես թղթակցի նայելուց, այլ նրան հաշվում են թերթի գործակալ։

Թերթերի բաժանորդագրության տարածումը բոլորովին ել բանթղթակիցների աշխատանքը չե, դրա համար ել յուրաքանչյուր թերթ ունի շե, գործականության գործակալներ։ Աս, շտատպվ համապատասխան գործակալներ։

իհարկե, չի նշանակում թե, թերթի տարածման
դորձը թղթակիցներին չպիտի մտահոգիւ Ընդ-
հակասակը, յեթե զործաբանում սփակասում են
բաժանորդների թիվը, խմբկոլի ու բանթղթա-
կիցների զործն եւ պարզել այդ յերեսույթի պատ-
ճառները և դրանից յենելով համապատասխան
միջոցներ ձեռք առնել: Խմբագրական կոլեգիա-
լի ու խմբակի աշխատանքների մեջ են մտնում
նաև աջակցել թերթի տարածմանը բանվորա-
կան մասսայի մեջ: Այդ արվում եւ թերթերի
տարածման համար տարվող ազիտացիայի ձեռվ,
վորի մասին զրվում եւ պստի թերթում, զե-
կուցվում զանազան ժողովներում և այլն:

Խմբագրական կոլեգիան և խմբակը պետք
ե հետեւն նաև թերթերի կանոնավոր առաք-
մանը՝ տպագրական թերթերի խմբագրություն-
ների միջոցով աշխատելով վերացնելու դրան
խոչընդուն հանդիսացող բոլոր սլայմանները:

VI.

ԲԱՆԹՂԹԱԿԻՑՆԵՐԻ ՄԻԶԱՋԳԱՅԻՆ ԿԱՊԸ

Բանթղթակիցալին շարժման համար կարևոր
նշանակություն ունի թղթակիցների միջազգա-
լին կապ: Այդ մասին բանթղթակիցների Համա-
միութենական յերբորդ խորհրդակցությունն ա-
սել ե:

«Բանթղթակիցների միջազգալին կապը
մեծ ազգեցություն ունի բոլոր յերկրների
բանվորության համերաշխության համար:
Յեվ այդ կապի կազմակերպումը մեր մա-
սուլի առաջնակարգ խնդիրներից և համար-
վում»:

Յեվիսկապիս վոչ մի լրագրալին ինֆորմացիա
չի կարող անել այն, ինչ անում են նամակները,
վորմաք Խորհրդակին Միության բանվորները փո-
խանակում են կապիտալիստական յերկրների
բանվորների հետ: Աշխարհի միակ յերկիրը դա
Խորհրդակին Միությունն ե, վորտեղ պետության
զեկը գտնվում եր բանվոր զասակարգի ձեռքին և
մլուս յերկրների բանվորներին շատ ե հետա-
քը բուժ, թե մեզ մոտ ինչպես են ապրում ու աշխա-
տում բանվորները, մեր բանվորների կյանքի

տմենափոքը յերեսութին անդամ հետաքրքրում ու հուզում ե նրանց:

Զպեաք ե մոռանալ, վոր բուրժուական և սոցիալ գավաճանների մամուլը Խորհրդային Միության մասին չափանված պոեր են տարածում, վոր դեռ արտասահմանում թույլ ե բանվորական մամուլը, և լայն բանվորական մասսաները, յեթե վոչ ամբողջովին, գոնե զգալի տոկոսով հավատում են այդ ստին ու զպարտություններին, ինչ ամեն որ սարքում ե մեր դեմ դեղին մամուլը:

Այս պատճառով բանթղթակիցների նամակները պետք ե ոգնեն կապիտալիստական յերկրության բանվորներին ճիշտ գաղափար կազմելու Խորհրդային Միության մասին և դրա հետ միասին նրանց ողնել համաձայնողական առաջնորդներից յերես դարձնելու գործում:

Այժմ պատմենք, թե ինչ ճանապարհով կարելի յե կապ հաստատել արտասահմանի բանվորների հետ: Մինչև 1926 թվի սկիզբը բանթղթակիցների նամակներն ուղարկվում ենին Կոմիտենի Ազիտ-պրոց բաժնի միջոցով: Արտասահմանի հետ կապ ստեղծել ցանկացող ընկերներն իրենց նամակներն ուղարկում ելին Կոմիտենի Գործկոմի Ազիտ-պրոց բաժնին, այդպես ելին ուղարկում նաև իրենց նամակներն

արտասահմանի ընկերները: Այս ձեր գժվարություններ եր առաջացնում: Համամիութենական յերբորդ խորհրդակցությունից հետո (1926 թ., մայիս) պարզվեց, վոր ավելի լավ ե մեր կենացրոնական թերթերը կազ հաստատեն արտասահմանի բանվորական թերթերի հետ ու բանթղթակիցներն իրենց նամակներն ուղարկեն այդ թերթերի խմբագրությունների միջոցով: Այս կարգն ել ընդունեց Համամիութենական յերբորդ խորհրդակցությունը: Բացի թերթերից բանթղթակիցները կարող են ոգտվել և այլ միջոցներից: Շատ հիմնարկների կուսակցության կամ կոմիերիտամիության բջիջները կապված են արտասահմանի բջիջների հետ և գրագրության մեջ են: Բանթղթակիցների խմբակը կամ խմբագրական կոլեգիան պետք ե պայմանագրվեն իրենց բջիջի հետ և նրա միջոցով նամակներ ուղարկեն նրանց, վորոնց հետ կապված ե բջիջը:

Նամակները յերբեք անհատական բնույթ չողիտի կը են, և անհատների չպիտի հասցեագրվեն, վորովհնետի այն ընկերը, վոր արտասահմանում մեզնից նամակ ե ստանում նա վտանգվում ե, նրան իսկույն հետեւմ ու հալածում ե բուրժուական վտանիկանությունը:

Բանթղթակիցներին հետաքրքրում ե այն հարցը, թե ինչ՝ մասին զրել արտասահման:

Պետք է իմանալ, վոր մենք և նրանք միանդաման՝ տարբեր պայմաններում ենք զանգույն և շատ հնարավոր են, վոր մեզ համար հասարակ մի խնդիր նրանց համար անհասկանալի լինի:

Արինաեի համար կարելի լի վերցնել աշխատանքի արտադրողականությունը: Մեզ համար սա հարվածային խնդիր է, վորի հաջող ընթացքի համար շահագրգուված ելուրաքանչյուր բանվոր: Ամեն գիտակից բանվոր հասկանում ե այդ: Իսկ արտասահմանում: Այնտեղ ել արդյունաբերության ռացիոնալացում և արտադրողականության բարձրացում ե անց կացվում: Բայց ով. — կապիտալիստները: Ինչի համար, — իրենց զրպաններն ուղղնելու: Ի՞նչ ճանապարհով — բանվորներին շահագործելով:

Ի՞նչ կսացվի, յերբ մեր թղթակցներն ուղղակի գրեն, վոր ահա մեզ մոտ աշխատանքի արտադրողականության բարձրացում և տարվում, զործարկումն այսպես այսպես միջոցներ ե ձեռք տուել և այն: Արտասահմանի բանվորը, յեթե այսպիսի նամակ կարդալու լինի, յեթե լավ ծանոթ չե խորհրդային սիստեմի և կոմունիստական: Կուսակցության քաղաքականությանը, նա կամ չի հասկանա, կամ կմտածի. — «մեզ մոտ ել աշխատանքի արտադրողականություն են բարձրացնում, մենք զիտենք զրտ ինչ պառող լինելը,

յերեսում ե, վոր Խորհրդային Միության մեջ ել լավ չե այնուեղ ել լանվորներին են բաժանում: Կոշանակի յերբ բանթվթակիցը մտածում և գրել աշխատանքի արտադրողականության մասին, պետք է մտածի այնպես անել, վոր կապիտալիստական յերկրներում ոպրող բավորների համար հասկանալի դառնա, վոր աշխատանքի արտադրողականության բարձրացումը մեզ մոտ և այնուեղ յերկու տարբեր բաներ են: Բացի այդ, նաև ակներում աշխատում են մեզ մոտ ամեն ինչ լավ ու կատարյալ պատկերացնել, այս ինարկե սխալ ե:

Վոչ վորի հարկավոր չե, վոր կապիտալիստական յերկրների բանվորները կարծեն, վոր մեզ մոտ ամեն ինչ լավ ե: Կարեոր ե, վոր նրանք Խորհրդային Միության մասին իմանան ձշմարիտը, այն հերոսական աշխատանքի մասին, վորն արված է և արվում է մեր յերկրի տնտեսության բարձրացման և բանվոր դասակարգի զրության բարելավման ասպարիզում: Պետք ե, վոր նրանք իմանան և այն դժվարությունների մասին, վորոնք զեռ մենք պետք ե հազթահարենք:

Պետք ե նաև ասել, վոր այն, ինչ մեզ համար միանգամայն պարզ ե, և արժանի չե հասուկ հետաքրքրության, արտասահմանում շատ

և հետաքրքրում բանվորներին։ Մեղ մաս ով չգիտի, վոր հզի կի՞նը ծննդարելությանից առաջ և հետո յերկուական ամիս արձակուրդ և ստանում, վոր բանվորներին չի կարելի արձակել առանց Պրոֆմիության համաձայնության և այլն, բայց սրանք դեռ կապիտալիստական յերկրների համար խնդիրներ են, վորի համար նրանք պայշտում են և պարզ ե, նրանց կհետաքրքրի։

Հասկանալի յէ, վոր արտասահմանից ստացված նամակները խմբակի կողմից լայն կերպով ե ոգտագործել պատի թերթի համար։ Անհամեշտ չե այդ նամակներն ամրողջովին պատի թերթում տպելը (ժանավանդ, յերբ յերկար են լինում), այլ կաբելի յէ թերթում բերել նամակի կարեռը մասերը։ Սա կնպաստի նրան, վոր այդ կապը մասսական յերեւցի կդառնա և բոլոր բանվորները կզբաղվեն զրանով։

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

I

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԲԱՆԳՅՅՈՒՂԹՂԹԱԿՑԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՍՊԱՐԻՉՈՒՄ

(Համեմ (ը) ԱԵԲԱԿՈՄԻ 1926 թ սպասուի
28-ի վորոշումը)

1) Յերկրի անտեսական ու կուլտուրական ընդհանուր վիրելքի և մասսաների հասարակական քաղաքական ակտիվության ս ձման պայմաններում, լուրջ նշանակություն են ստանում բանգյուղթղթակցական շարժման դեկավորության հարցերը։ Այդ շարժումը մեկն ե բանվորակալուզական հասարակականության ձևերից և առնչություն ունի առորյա քաղաքական կյանքի ու անտեսական շինարարության բոլոր բը նագավառների հետ։ Հիշյալ հարցերն ավելի և կարենոր են գառնում այն տեսակետից, վոր մանգյուղթղթակցական շարժման մեջ արտացորիւմ են մեր յերկրի ընդհանուր սոցիալ-անտեսական պայմաններից բղխող մի շարք յերկույթներ, այն ե՝ բանթղթակիցների շարքերն են մանում պյուղից յեկած բանվորների և ը

նոր խավեր և զրտ շնորհիվ գեղքեր են պատահում, վոր բանդու զթղթակցական փորոշ կազմակերպություններ հետո են մնում կուսակցության դեկավարությունից։ Առաջ քիչ աշազրություն ե նվիրվում զյուղթղթակցական շարժման մեջ չըավոր և բարրակ տարրեր ներդրավելու գործին, զյուղթղթակցական շարժման մեջ թափանցում են կուլակացին, հակախորհրդագին ազգեցություններ, բանգյուղթղթակցական շարժման մեջ շարքերը մտնում են զգալի թվով ծառայողներ, վոր հետեւանք ե ինտելիգենցիայի ակտիվության աճման։

2) Վերոհիշյալից յենելով անհրաժեշտ և ուժեղացնել կուսակցական զեկավարությունը կոմիտեներից ոկտած մինչև ստորին բջիջները։ Այդ նպատակով պետք ե մի կողմից վերացնել այն անուշադիր վերաբերմունքը դեպի բանգյուղթղթակցակցների շարժումը, վոր հայտնաբերում են կուսակցական բջիջներից վոմանք, իսկ մյուս կողմից վերջ պետք ե տալ զբարննության, արդելումներին և հրամաններին։ Կուսակցության շարքերում բանգյուղթղթակցների շարժման խնդիրներն ու մեթոդները ժողովրդականացնելու նպատակով, անհրաժեշտ ե նաև կուսակցական թերթերում լուսաբանել բանգյուղթղթակցական շարժման վերաբերյալ հարցերը։

3) Բջիջները պետք ե նպաստեն ձեռնարկություններում և զյուղում բարենպաստ պայմաններ ստեղծելու բանգյուղթղթակցների ու պատի լրագրի աշխատանքի համար, աջակցեն նըմնց պաշտպանության գործին, բանգյուղների ու զյուղացիների լայն խավերին բացատրելու բանգյուղթղթակցական շարժման ելությունը, նպաստեն քննելու և ուղելու տեղական աշխատանքին վերաբերյալ այն փաստերն ու թերությունները, վորոնք հայտնաբերվել են բանգյուղթղթակցների հոգվածների միջոցով։

4) Բանգյուղթղթակցական կազմակերպությունները պետք ե զեկավարվեն այդ կազմակերպություններում աշխատող կոմմունիսմների կողմից։ Կուսակցական զեկավարության ուժեղացումը չպետք ե կոմմունիզմներ տուաշացնի բանգյուղթղթակցական կազմակերպությունների մեջ։

5) Կուսակցական ստորագաս կազմակերպությունները տեղական հասարակական կազմակերպությունների զեկավարման ընդհանուր պըլանի մեջ պետք ե մացնեն նաև բանգյուղթղթակցական խմբակների աշխատանքը։ Կուսակցական բջիջները պետք ե պարբերաբար զեկուցումներ լայն խմբերի մեջ մանադ կուսանցմներից՝ բանգյուղթղթակցական խմբակների

ու պատի լրագրերի աշխատանքի մասին և բըն-
նարկեն բանգուղղթղթակցական շարժման հեր-
թական խնդիրները:

6) Նպատակահարմար և, վոր պատի լրագ-
րերի խմբկուներն ընտրվեն բանթղթակցական
խմբակների ընդհանուր ժողովներում։ Կուսակ-
ցական բջիջները խարկուների ընտրության վրա
պետք ե ազգեցություն գործեն, վոչ թե ան-
դամներ նշանակելով, այլ գաղափարական ներ-
գործումով, վորի նպատակը պետք ե լինի, այդ
աշխատանքին ներդրավելու ամենաակտիվ
քաղաքականապես կոփված ե բանգուղղթղթակ-
ցական շրջանում հեղինակություն վայելող ըն-
կերներին։

7) Պատի լրագրերը պետք ե գառնան մաս-
սաների լայն ինքնագործունելության որդաներ։
Պատի լրագրերի խմբկուները պետք ե լրագրին
մասնակից զարձնեն բանվորների ու բանվո-
րունիների, զյուղացիների ու գեղջկունիների վոր-
քան կարելի լի լայն շրջանները։ Այդ տեսակե-
տից նպատակահարմար ե բանգուղղթղթակիցնե-
րի խմբակների հրատարակած թերթերն անվա-
նել վոչ թե վորեւ ձեռնարկության, կազմակեր-
ուության, կամ գյուղթղթակցական որդան, այ-
սպասարկության բանվորների կամ տրվ-
յալ զբարի զյուղացիների լրագրի։

8) Տպագրական, վիմագրական և այլ մի-
ջոցներով շատ որինակներով հրատարակվող պա-
տի լրագրերի խմբկուները պետք ե ընտրովի
լինեն, սակայն այն պայմանով, վոր պատաս-
խանատու խմբագիր նշանակվի մերձավոր կուս-
կոմի կողմից (գավառներում՝ Գավկոմի կողմից,
իսկ քաղաքներում՝ շրջանային կոմիտեների կող-
մից):

9) Ուժեղացնելով բանգուղղթղթակցական
կազմակերպությունների ղեկավարությունը տե-
ղական կուսկոմների կողմից, միենույն ժամա-
նակ անհրաժեշտ ե ուժեղացնել բանթղթակցա-
կան շարժման ղեկավարությունը նաև տպագրի
թերթերի խմբագիրների կողմից։ Վերջնաներիս
ցուց տված ղեկավարության թուլության պատ-
ճառն այն ե, վոր նախ խմբագրությունների ապ-
պարատը թուլ ե և հարմարեցված չե կազմա-
կերպչական ու քաղաքասիարակչական աշխա-
տանք կատարելու և լերկըրդ՝ տեղական կազ-
մակերպությունները չեն կենսագործել։ Կենսա-
կոմի վորոշումները, ըստ վորոնց խմբագրու-
թյունները պետք ե ուժեղացվեն կուսակցական
աշխատակիցներով՝ բանգուղղթղթակիցների շրջա-
նում աշխատանք կատարելու նպատակով։ Խըմ-
բագրությունները պետք ե իրենց թերթերում
կազմակերպեն բանթղթակցական ուժեղ բաժին-

ներ, վորոնց զլուխ պետք և անցնեն կազմակերպչական հասարակական աշխատանքի փորձառություն ունեցող կուսանդքամներ։

10) Կուսակցական խորհրդավին թերթերի խմբագրությունները պետք ե ավելի ուշադրություն նվիրեն բանգրուղթիթակիցների կազմի ուսումնասիրելու և կարգավորելու գործին։ Այդ նպատակով գտումներ և ստուգումներ կազմակերպելն աննպատականարժեար և, անհրաժեշտ ե ձգտել կազմի լավացման՝ գլխավորապես ներդրավելով նրա մեջ դադցանից ավելի մեծ թվով անկուսակցական բանվորներ և հողագործ գյուղացիներ։ Հատուկ ուշադրություն պետք ե արվիրել բանվորուհիների ու գեղջկուհիների ներգրավման գործին։

11) Անհրաժեշտ ե ավելի ուժեղ զեկավարություն ցույց տալ գյութղթակցական շարժմանը, փորը պետք ե ուժեղացնել բատրակներով և չքավոր զբաղացներով, փորպես մեր կուսակցությանը սոցիալապես ավելի մոտ տարրեր զյուղում։ Դա անհրաժեշտ ե մանավանդ այն պատճառով, փոր այդ աշխատանքի ասպարիզում ամենամեծ դժվարությունները ծագում են զյուղթղթակիցների բանակական աճումից, նրանց ցրվածությունից, նմանապես և գյուղական մեր կուսակցմակերպությունների թուլությունից։

12) Մոտակա ժամանակաշրջանի համար, մեր բանգրուղթղթակիցների հիմնական խնդիրը բաղկասափարուղչական աշխատանքի զարգացումն է։ Կուսկոմիտեները պետք ե սիստեմատիկորեն զեկավարեն խմբագրությունների այդ աշխատանքը, ոգնելով նրանց աշխատանքի պըլան և մեթոդներ մշակելու, նրանց տրամադրության տակ զեկուցողներ և պարապմունքի զեկավարներ գնելով և աջակցություն ցույց տալ խմբագրություններին՝ կազմակերպելու սեմինարիաներ, զրախոսական բլուրոներ և պատիլրագրի ցուցահանդեսներ՝ այդ ասպարիզում աշխատողների համար։

13) Բանգրուղթղթակցական շարժման ասպարիզում կուսակցության բոնած գիծն ամբողջովին արգարացավ։ Հետագայում ևս պետք ե այդ գիծը կիրառել։ Կուսակցության կոմիտեներն այդ շարժումը պետք ե զեկավարեն մի կողմից ապագիր թերթերի խմբագրությունների և մրուս կողմից կուսակցական ստորագառ կազմակերպությունների միջոցով՝ առանց ըստանձնելու բանգրուղթղթակիցների կապի ու զեկավարության անմիջական ֆունկցիաները։

14) Կուսակցական կոմիտեները մի շարք միջոցներ պիտի գործադրեն՝ տնտեսավարները ու բանթղթակիցների փոխհարարերությունները

բարվոքելու և վարչատնտեսական սրգանների
մեջ ճիշտ բարոնում ստեղծելու համար բան-
դիուզթղթակցական շարժման հասարակական ու-
ժաղաքական նշանակության մասին։ Անհրա-
ժեշտ է շարունակել պայքարը բանդիուզթթրդ-
թակցների հանդեպ հարուցված այլ և այլ հա-
լուծանքների դեմ և ել ավելի ուժեղացնել այդ
պայքարը։

15) Կուսկոմները պետք եւ կարգավորեն
բանդիուզթղթակցական նյութերի հետաքննու-
թյան գործը, պայքարելով այսպիսի դեպքերի
դեմ, յերբ վարչությունը և գատական մարմին-
ները ձեական ու անուշադիր վերաբերնունք Են
հայտնաբերում լրագրերում զետեղված կամ հե-
տաքննության համար հիմնարկություններին ու-
ղարկած թղթակցություններին (բյուրոկրատի-
ձեական հերքումների դեմ, հետաքննությունը
շահագրգուված անձնափորության հանձնելու դեմ
և այլն). միևնույն ժամանակ պետք եւ հետեւ,
վոր մեղավորները պատասխանատվության կանչ
վեն։

II

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ԲԱՆԹՂԹԱԿԻՑՆԵՐԻ ՄԻ ԳՅՈՒՂԹՂԹԱԿԻՑՆԵՐԻ
ԽՄԲԱԿՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՅԵՎ ՆՐԱՆՑ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

(Այս կանոնները մշակել ե «Բանդիուզթղթակց» հանգեսլ խըմ-
րագրությունը հիմք ընդունելով «Պրովու»-ի բանդիուզթղթակց-
ների համամելութենական Յ-րդ խորհրդակցության
հանաձ գորոշումները)

ԽՄԲԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Բանթղթակիցների խմբակը - իրենց ձեռ-
նարկության պատի լրագրում կամ զանազան
տպագիր թերթերում ու հանդեսներում գրող
ըսլոր բանվորների ու բանվորուհիների կամա-
վոր համախմբումն ե և կազմակերպվում ե հե-
տեւյալ խնդիրներն իրագործելու համար։

ա) Մամուլի միջոցավ ոժանդակել խորհը-
ղային և անաեսական տպագարատի, ոլորֆկազմա-
կերպությունների, կոոպերացիալի և զանազան
ինչպես գործարանալին, ախոլես և ընդհանուր
(ոարնական, քաղաքալին, և այլն) հասարակա-
կան կազմակերպությունների աշխատանքների
բարելավմանը և լուսաբանել բանվորների կանքի
ու կենցաղի վերաբերյալ հարցերը։

բ) Զեռնարկության բանվորներին ու բանվորուհիներին մասնակից անել պատի լրագրին ու ընդհանուր մամուլին և նրանց լծել բանթըղթակիցների խմբակի աշխատանքներին:

գ) Նպաստել բանթղթակիցների քաղաքական և կուլտուրական մակարդակի բարձրացմանը, նպատակ ունենալով նրանց ըմշանուժ ՀԱՄ ԿԿ և Խորհրդավային իշխանության խնդիրների ճիշտ բմբնողությունը մշակել և նրանց լուրացնել տալ խորհրդավային և կուսակցական մամուլի անելիքներն ու բանգլուղթղթակցական շարժման ղերը:

դ) Աջակցել մամուլի տարածմանը ձեռնարկության մեջ:

ե) Միջոցներ ձեռք առնել բանթղթակիցներին հալածանքներից պաշտպանելու համար:

ԽՄԲԱԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

2. Իր խնդիրները բանթղթակիցների խըմբակին իրագործում և հետեւալ միջոցներով.

ա) Տվյալ ձեռնարկության անտեսական և հասարակական քաղաքական կյանքի հարցերն ու փաստերը պատի լրագրում և ընդհանուր մամուլում լուսաբանելով:

բ) Տվյալ ձեռնարկության կյանքի հարցերին վերաբերող գեկուցումներ ու զրույցներ

կազմակերպելով, կազմելով այն ՀԱՄ, ԿԿ և Խորհրդավային իշխանության բնթացիկ բաղաքականության և մամուլի հերթական խնդիրների հետ:

գ) ՀԱՄ, ԿԿ և Խորհրդավային իշխանության քաղաքականության միատեսակ հարցերը պիտի բղիսն բանթղթակիցների աշխատանքի գործնականից (որինակ, յերկրի անտեսական զրության, աշխատանքային գիսցիպիֆնալի, պրոֆմիությունների հերթական խնդիրների, ՀԱՄ, ԿԿ գուղական քաղաքականության, հավաքական պայմանագրերի և այլ խնդիրների մասին), սակայն այդ զրույցները չպետք է վերածվեն բանթղթակիցների աշխատանքի անմիջական խնդիրներից կարգած չոր ու ցամաք գասախոսությունների:

դ) Աջակցել, զոր բանթղթակիցները մրանեն ձեռնարկության բաղկրթական դպրոցների և խմբակների (քաղգրագիտության, մարքսիզմի և այլն) ցանցի մեջ:

ե) Բանթղթակիցներին մասնակից անելով պատի լրագրի գործի և մամուլի հարցերին վերաբերող տեղական թերթերի խմբագրություններին կից կազմակերպվող սեմինարներին:

զ) Բանգլուղթղթակցական գրականության մեջ առաջավոր խնդիրների հավաքական ընթերցումներ և բննություններ կազմակերպելով:

է) Բանթղթակիցների հատուկ հետաքըլր քրություն ներկայացնող թղթակցությունների և հոդվածների հավաքական ընթերցում կազմակերպել վորը, ստկայն, չպետք է այն հետևանքն ունենա, վոր բոլոր թղթակցությունները նախապես պարտագիր կերպով քննության առնվեն խմբակում և, առանց հեղինակների համաձայնության, կեզծ անունները հրապարակվեն:

ը) Բանփորների շրջանում լայն կերպով մասսայականացնել մեր մամուլի և բանթղթակցական շարժման խնդիրը խմբակի գոնքաց ժողովներում, գործկոմի կուլտ հանձնաժողովի հետ միասին զեկուցումներ, զրույցներ, ցուցադրական դատեր, մամուլի յերեկոներ և այն կազմակերպել:

թ) Ուշագրությամբ հետեւ բանթղթակիցների հոդվածների հաջողություններին, և պատի լրագրում ու ընդհանուր մամուլում լուսաբանել պատի լրագրի ու բանթղթակիցների խմբակի ունեցած հաջողությունները:

ժ) Աջակցել թերթերի և գրքերի տարածմանը ձեռնարկության մեջ մեր ընդհանուր շնորհության ասպարիզում մամուլի ունեցած նշանակությունը և թերթերին ու հանդեսներին բաժանորդագրվելու պայմանները պարզաբանելու միջոցով:

ժա) Այսեն կերպ պաշտպանել բանթղթակիցներին հալածանընթարից՝ մոռագու տպագիր թերթի խմբագրության, տեղական կազմակերպությունների, դատախացության մարմինների և վերահսկիչ Հանձնաժողովների միջոցով:

ԽՄԲԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

3. Բանթղթակիցների խմբակը կազմակերպում և տեղական պատի լրագրին կից և իր առաջնահերթ խնդիրն ե համարում այն, վոր պատի լրագիր ստեղծի այնտեղ, վորտեղ այդպիսին չկա:

4. Բանթղթակիցների խմբակի կողմից լույս տեսնվող պատի լրագիրը կոչվում է ավլալ ձեռնարկության բանփորների և ծառայողների թերթ, և վոչ թե վորեւ առանձին կազմակերպության որգան. այդ թերթին մասնակցում են տվյալ ձեռնարկության բոլոր ցանկություն ունեցող բանփորներն ու բանփորուհիները:

5. Խմբակի և պատի լրագրի աշխատանքները զեկավարում ե լրագրում գրող բոլոր բանփորների ու բանփորուհիների ընդհանուր ժողովի կողմից ընտրված խմբագրական կոլլեգիան:

6. Խմբագրական կոլլեգիան պատասխանուու յե ինչպես խմբակի աշխատանքի, այնպես և պատի լրագրի բովանդակության և նրա մեջ զետեղվող նյութի համար:

7. Խմբագրական կոլլեգիան կատարում է պատի լրագրի մեջ մասնող նյութի հաշվուումը, հետևում է, որ խմբակի որագիրը ձշտությամբ տարվի, աջակցում է խմբակի աշխատանքների լուսաբանմանը բանգյուղթղթակիցների հրատարակություններում և թերթերում, և մասնակցում է պատի լրագրի կողմից կազմակերպվող ցուցահանդեսներին:

8. Պատի լրագրի աշխատանքը ձիշտ հիմունքների վրա գնելու նպատակով բանթղթակիցների խմբակն ամենասերտ կապեր և հաստատում չամ. Կ(բ) Կ և չամ ԼԿՅԵՄ աեղական կազմակերպությունների հետ, ինչպես և կազ և պահպանում գործարկում և ձեռնարկության բոլոր հասարակական կազմակերպությունների հետ, Նրանց միջոցով խմբակը պատի լրագրի լույսընծայման, բանթղթակցական գրականություն ձեռք բերելու համար անհրաժեշտ միջոցներ ու նյութեր և փնտուում:

9. Բանթղթակիցների խմբակը կազ և հաստատում մուտագա տպագիր թերթի հետ (գավառական, արշանային կամ նահանգական), հարաբերությունների մեջ և մասնում նրանց հետ իր աշխատանքի խնդիրների վերաբերյալ և նրան ինֆորմացիա տալիս իր աշխատանքի ընթացքի մասին:

10. Խոշոր ձեռնարկություններում, վորտեղ գոլություն ունեն համբյարակին (զեխ) պատի լրագրեր և մեծ թվով բանթղթակիցներ կան համբյարություններում, կարելի յե կազմակերպել բանթղթակիցների համբյարային խմբակներ:

11. Ինչպես տեղական, այնպես և կենտրոնական տպագիր թերթերը ձեռնարկություններում իրենց բանթղթակիցներից առանձին խմբակներ չեն կազմակերպում, վորը, տական, նրանց չի զբկում աշխատանք կատարելու և ի ըստ բանթղթակիցներին ի մի հավաքելու հնարավորությունից, նրանց հետ անմիջական հարաբերությունների մեջ մասնելով:

12. Խոշոր ձեռնարկություններում, նայած պարմաններին և պատի լրացրերի գրությանն ու այլ ձեռնարկություններում կատարվող բանթղթակցական աշխատանքին, կարող են կազմակերպվել յերիտթղթակիցների առանձին խընկակներ:

III

ԿԱՆՈՆՆԵՐ

**ԳՅՈՒՂԹՂԹԱԿԻՑՆԵՐԻ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՎԱԶՄԱ-
ԿԵՐՊՄԱՆ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ԳՅՈՒՂԹՂԹԱԿԻՑՆԵՐԻ ԽՄԲԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Գյուղթղթակիցների խմբակը գյուղթղթակիցական շարժման նախնական (սասորին) կառավագությունն եւ խմբակը կամավոր հիմունքներով միավորում եւ տեղական պատի լրագրում կամ տպագիր լրագրերում ու հանդեսներում զրոյ վորոշ շրջանի կամ գյուղի գյուղացիներին և գեղջկուհիներին:

Գյուղթղթակիցների խմբակը կազմակերպվում է հետեւյալ նպատակներով.—

1. Տեղական պատի լրագրի և զանազան տպագիր լրագրերի ու հանդեսների միջոցով նպաստել գյուղի անտեսության բարելավմանն ու կուլտուրական շինարարությանը, ինչպես և խորհրդագիրն ապարատի բարելավմանը:

2. Նպաստել գյուղթղթակիցների քաղաքական և կուլտուրական մակարդակի բարձրացմանը. այս աշխատանքի նպատակն այն եւ, վոր ոգնենք նրանց. վորպեսզի ճիշտ կերպով հասկանան գյուղթղթակիցների դերը և խորհրդագլուն շինա-

րաբության խնդիրները, լուր իմանալով, վոր զյուղթղթակիցները սոցիալիզմի շինարարությանն ակտիվ մասնակցող տռաջավոր հասարակական գործիչներ պետք եւ լինեն:

3. Լույս ընծայել պատի լրագիր, մշակել այդ լրագիրը ղեկավարելու փորձը, լրագրական աշխատանքը, թղթակցություն կողմելու և աշխատակցելու յեղանակը և այլն:

4. Դեպի գյուղթղթակցական աշխատանք գրավել չքավոր և միջակ խավերին պատկանող գյուղացիներին ու գեղջկուհիներին և մամուլի միջոցով մասնակից դարձնել նրանց հասարակական աշխատանքներին:

5. Գյուղացիության վասահությունը դեպի գյուղթղթակիցներն ու մամուլը բարձրացնելու նպատակով բացատրել գյուղացիությանը մամուլի և գյուղթղթակցային աշխատանքի նշանակությունը:

6. Աջակցել լրագիր և կիրք գյուղ հասցնելու գործին:

7. Համապատասխան մարմիններին զրգել ձեռք առնելու միջոցներ, փորձնցով կարելի կլինի պաշտպանել գյուղթղթակիցներին հալածանքներից:

ԴՅՈՒՂԹՂԹԱԿԻՑՆԵՐԻ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԱՇԽԱ-
ՏԱՆՔԸ

Վերը հիշված խնդիրները լավագույն կերպով
իրականացնելու նպատակով գլուղթղթակիցների
խմբակն անում և հետեւալը. —

1. Տեղական պատի լրագրում և տպագիր
լրագրերում լուսաբանում և տվյալ շրջանի կամ
գյուղի տնտեսական և հասարակական քաղաքա-
կան կյանքի ամենալարեւը փաստերն ու հար-
ցերը, ըստ վորում գյուղացիության ուշադրու-
թյունն ավելի զրավելու և լրագրի հեղինակու-
թյունն ավելի բարձրացնելու նպատակով՝ առաջ
և քաշում այն հարցերը, վորոնք տվյալ մոմենտում
ամենից շատ են հետաքրքրում գյուղացիությանը:

2 Կազմակերպում և զրուցներ շրջանի կամ
գյուղի կյանքում և գյուղթղթակցային աշխա-
տանքի մեջ ծագող հարցերի շուրջը, այդ հար-
ցերը կազակցելով խորհրդացին մասուլի խըն-
դիրների և գյուղում կատարվող խորհրդացին
շինարարության ընդհանուր խնդիրների հետ:

3. Կազմակերպում և պարագմունքներ և
զրուցներ կոոպերացիայի, գյուղխորհուրդների
աշխատանքի, կուլտ աշխատանքի, հեղափոխա-
կան որբնականության, արդյունաբերության և
գյուղատնտեսության միջև դոկտություն ունեցող
կապի և այլ հարցերի մասին, այդ հարցերի քրն-

նարկումը կատարելով տեղական պայմանների
և դրուղթղթակցային աշխատանքի հետ:

4. Կազմակերպում և կողեկանիվ (խմբական)
ընթերցում և զրուցներ բանգյուղթղթակցական
հրատարակություններում առաջ քաշված խնդիր-
ների շուրջը:

5. Կազմակերպում և տեղական պատի լրա-
գրում կամ գավառական ու կենտրոնական թեր-
թերում և հանդեսներում լույս տեսած գյուղ-
թղթակցային փոքրիկ հոգվածների և թղթակցու-
թյունների և տպագիր թերթերին ուղարկելու
համար տեղական պատի լրագրից հանձնված
հոգվածների քննագատություն, բայց վոչ մի
գեպքում թույլատրելի չե հեղինակների ծած-
կանունները բացել և սահմանել տպագիր թեր-
թերին ուղարկվող բոլոր գյուղթղթակցային հոգ-
վածները նախապես պահանջման կերպով քննա-
գատելու կարգ:

6. Միջոցներ և ձեռք առնում արագացնելու
խմբակի անդամ գյուղթղթակիցների հոգվածների
ծագած հետաքննությունները, պատի լրագրերում
և տպագիր թերթերում արձանագրում և այդ
թղթակցությունների տված արգյունքները:

7. Խմբակում քննարկում և պատի լրագրերի
լույս տեսած համարները և լույս ընծավելիք
համարների ծրագրերը, վորով նպաստում և այն

բանին, վորպեսզի խմբակի բոլոր անդամներն առ վերի ակտիվ մասնակցեն պատի լրագրի գործի դրվածքին և նրա վարելու աշխատանքներին. այդ բանը միաժամանակ նպաստում է դեպի պատի լրագրի և գեղի խմբակ նոր անձնավորություններ գրափելու գործին:

8. Խմբակը կազմակերպում է գոնքաց ժողովներ, վորին մասնակցության և կանչում գեռ ևս լրագրում չգրող, բայց գյուղթղթակցային աշխատանքով ու լրագրերով հետաքրքրվող գյուղացիներին և գեղջկուհիներին. հնարավորության չափ մեծ թվով գյուղացիներ գյուղթղթակցային շարժման մեջ ներգրավելու նպատակով՝ խմբակը խրճիթ-ընթերցուրանի, կամ այլ քաղլուսվարական հաստատությունների հետ միասին ժամանակ առ ժամանակ կազմակերպում է ազգաբնակչության համար գեկուցումներ մամուլի և գյուղթղթակիցների մասին, ցուցադրական դատեր պատի լրագրի վերաբերմաբ, մամուլի յերեկութներ և այլն, մասնակցում ե գյուղական քաղլուսվորական հաստատությունների այն ընդհանուր աշխատանքին, վոր նրանք կատարում են լրագրի ընթերցման և նրա շուրջը կազմակերպած գրուցների միջոցին:

9. Խմբակը նպաստում է մամուլի տարածման գործին, բարձրացնելով ժամուլի հեղինակու-

թյունը գյուղթղթակիցների հոգվածների նվաճումներով, բացատրելով մամուլի նշանակությունն ու ոգուար գյուղական համայնքների և գյուղացիների ժողովներում, տեղեկանքներ տալով գյուղացիներին լրագրերի և հանդեսների բաժանորդագրության պայմանների մասին. մամուլի միջոցով նպաստում է փոստավիճակ բաժանմունքների կողմից բաժանորդագրություն հավաքելու և լրագրերն ու հանդեսները տեղ հատցնելու աշխատանքի բարեւագման գործին և այլն:

10. Տեղական գյուղթղթակիցներից մեկն ու մեկի գեռ հալածանք յերևան գալու դեպքում խմբակը միջոցներ և ձեռք առնում պաշտպանելու հալածվողին, այդ մասին ժամանակին հայտնելով ամենամոտիկ տպագիր թերթի խմբագրությանը, ինչպես և գործելով կուսակցական-խորհրդացին և հանրային կազմակերպությունների ու զատախազության միջոցով:

ԳՅՈՒՂԹՂԹԱԿԻՑՆԵՐԻ ԽՄԲԱԿԻ ԿԱԶՄԱԿԻՐ. ՊՈՒՄԾ

Գյուղթղթակիցների խմբակը կազմակերպվում է տեղական պատի լրագրին կից, իսկ վորտեղ այլպիսին չկա՝ խմբակն իր առաջնահերթ խընդիրն և դարձնում պատի լրագիր ստեղծել:

հրատարակելու և բանգրւղթղթակցալին դրականություն ձեռք բերելու համար անհրաժեշտ միջոցներ ու նյութեր:

5. Տեղական պատի լրագրի և խմբակի աշխատանքների խմբագրական կոլլեգիան և կանչում տեղական ուսուցչներ, խոճիթվարին, գյուղատնտեսին, հասարակական այլ կազմակերպությունների աշխատակիցներին:

6. Խմբագրական կոլլեգիան նախապատրաստում և խմբակի ժողովները, հարցերի կարգը և չամ. Կ. (Բ.) Կ. ու ԼԿՅԵՄ տեղական բջիջների խորհրդով ու աջակցությամբ հրավիրում և զեկուցողներ, ինչպես և գյուղթղթակիցներին հետաքրքրող և վարչական մարմինների աշխատանքի հետ կապ ունենալող խնդիրների քննարկմանը մասնակցելու յե կանչում այդ մարմինների ներկայացուցիչներին: Խմբկոլը պահում և պատի առաջարկությունների համար ստացված նյութերի համար կազմակերպությունների՝ գավառային գործկոմի, գյուղաբնագրի, կոոպերատիվի, գյուղացիական փոխոգոմի, խոճիթ-ընթերցարանի, ժողովրդական տան և այլ հաստատությունների ու հիմնարկների հետ. տեղական քաղաքավարական կազմակերպությունների ու հաստատությունների միջոցով խմբակը դանում է պատի լրագրի

7. Խմբկոլն ամբողջությամբ ուսումնական առաջարկությունների ինչպես խմբակի աշխատանքի,

2. Գյուղթղթակիցների կողմից լրւյա ընծայփող լրագրի կոչվում է տվյալ գյուղի կամ շըրջանի գյուղացիության լրագրի և նրան կարող են աշխատակցել բոլոր ցանկացող միջակ և չքավոր գյուղացիները:

3. Խմբակի աշխատանքը և պատի լրագրի դեկավարում և պատի լրագրի խմբագրական կոլլեգիան (խմբկոլ), վորին ընտրում և խմբակի անդամների ընդհանուր ժողովն իր վարուշ ժամանակով:

4. Ընթացիկ գյուղական կյանքի և աշխատանքի հարցերում լավագույն կերպով փոխադաբար մեկ մեկու տեղյակ (իրազեկ) պահելու նպատակով՝ խմբակը խմբկոլի և առաջին հերթին նրա կազմի մեջ մանող կոմունիստաների կամ կոմիերիտականների միջոցով հնարավորության չափ սերտ կապ և պահպանում չամ. Կ. (Բ.) Կ., ԼԿՅԵՄ տեղական կազմակերպությունների և տեղական խորհրդացին ու հասարակական կազմակերպությունների՝ գավառային գործկոմի, գյուղաբնագրի, կոոպերատիվի, գյուղացիական փոխոգոմի, խոճիթ-ընթերցարանի, ժողովրդական տան և այլ հաստատությունների ու հիմնարկների հետ. տեղական քաղաքավարական կազմակերպությունների ու հաստատությունների միջոցով խմբակը դանում է պատի լրագրի

այնպես ել տեղական պատի լրագրի բովանդակական կության և այդ լրագրի մեջ զետեղված նյութերի համար:

8. Գյուղթղթակիցների խմբակը սերտ կատ է հաստատում ամենամոտիկ (գավառական կամ կենտրոնական) տպագիր լրագրի խմբագրության հետ և իր աշխատանքի ընթացքում զեկավարվում ե այդ խմբագրության ցուցումներով, տեղեկաթյուն և տալիս նրան իր աշխատանքի մասին, դիմում և նրան այս կամ այն հարցի վերսբերյալ բացաբառություն ստանալու և այլն։ Համապտասխան տպագիր լրագրի խմբագրության միջոցով բանգյուղթղթակիցների խմբակը կատ է հաստատում զանազան գավառական և կենտրոնական խորհրդակցին և հասարակական կազմակերպությունների ու հաստատությունների հետ։

9. Ի՞նչպես տեղական, այնպես ել կենարունական տպագիր թէրթերն իրենց գլուղթզի ու կիցների տուանձին խմբակներ չեն կազմակերպում տեղերում, սակայն նրանք կարող են անմիջապես կապ հաւատափել իրենց գլուղթզի ակիցների հետ և անսիջական կերպով ուղարկել նրանց իրանց հրահանդները:

10. Գյուղերում՝ կինթղթակիցների, կամ
յերիամիղթակիցների սոսանձին՝ խմբակներ չեն,
կազմված են բայց իրենց վերաբերյալ՝ խնդիրների

կամ կանանց և լերիտատարդական հրատարակություններից ստացված ցուցումների և հարցերի քննարկան համար գլուղթիթակիցներն ու լերիտաթակիցները կարող են իրենց առանձին ժաղովները զումարել:

IV

Σ Ε Γ Σ Ο. Α Τ Ρ Ο. Τ Ο. Β

ԺՈՂԱՏՏԽԱՐՀԻ ԲՈԼՈՐ ՅԵՆԹԱԿԱՆ ԶԵՐԱՄՐԿՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Պարբերական մամուլի հետ միասին, վօրք
սիստեմատիկ պայքար և մղում մեր տնտեսա-
վարության բացերի ու թերությունների և դրա-
նից բղխող անարտադրական ծախսերի գեմ, մեծ
գեր են կատարում նաև զործարանային ու ար-
հեստանոցային պատի լրագրերը, հայտնաբերե-
լով արտադրության մեջ նկատվող անորմալ-
իերությունները և բացերը:

Սկսիվ պրոլետարք, պատի լրագրի, տեղական բանվորական մաժուլի միջոցով աշխատում ե լուսաբանել տվյալ ձեռնարկության հիմքանգույն լեզուայթները և կենացացնել սրանց վրա բանվորական մասսայի ու ձեռնարկության դեկավարների ուշադրությունը: Խորհրդային մաժուլի այդ ճշուղն ահապին նյութ ե մատակա-

րարում, վոր արզունք և նկատված թերությունները վերացնելու համար բանվորների կատարած աշխատանքի: Աւատի լուրաբանչությունը ձեռնարկության գեկավարի ու զգակի պարագանությունն և ուշադիր վերաբերմունք ցույց տալ այդ որդաններին, գործնական կազ և կոնտակտ հաստատել նրանց հետ և միատեղ պայքար մղել՝ արտադրության կազմակերպումը բարելավելու համար: Այն ինչ հաճախ են պատահում գեպքեր, յերբ առանձին տնտեսավարները սխալ են հասկանում պատի լրագրերի դերն ու նշանակությունը և իսպառ չեն հասկանում նրանց մեջ բերած տեղեկություններն այս կամ այն բացերի մասին: Այդ պարագան իր հերթին սրում և հարաբերությունները գեկավարի ու պատի լրագրերի միջև, վորոնք իրենց իրենց կամ առանձին տեղեկությունների մեջ պատի լրագրերը և տեղական մասնակիությունների մեջ գեկավարներին առաջարկում են:

Նմանորինակ գեպքերը պետք է վճռականութեն վերացվեն: Մեր առջև յերկրի բովանդակ ժողանաեսության առջև խնդիր և ծառանուլ տեղական, համառ պայքար մղել խնայողության ոեժիմ հաստատելու և արտադրական պրոցեսսի բոլոր աստիճանները ռացիսնալացնելու համար: Այդ վիթխարի խնդիրները մենք ամենենք շենք կարող կենսագործել միմիայն արտադրության վարչական որդանների միջոցով: Մենք պետք ե-

այդ պայքարին մասնակից գարձնենք բանվորական լայն մասսաներին, միասնական ճակատ ստեղծենք բանվորական մամուլի ճյուղավորված որդաննիզմի հետ, վորը հայտնաբերում, հաստրակական գատաստանի առջև և գնում արտադրության մի շարք ներքին ցավերն ու բացերը:

Տնտեսավարների և մամուլի տեղական որդանների միջև համագուծակցություն ստեղծելու և այն հաստատելու, տնտեսավարության բոլոր յերեսուլիթների գեմ պայքարի միասնական ճակատ սահմաննելու նպատակով – ձեռնարկությունների գեկավարներին առաջարկում են:

1. Ավելի խստորեն հսկել, վոր իրոք հետաքենա անտեսավարության, շուալության և թափթափածության այն բոլոր փաստերը, վորոնք մասնանշում են պատի լրագրերը և տեղական թերթերը:

2. Հրապարակել տալ այդ գեպքերի քննության հետևանքներն այն որդաններում, վորակ գետեղված են յեղել ավլալ տեղեկությունները:

3. Նկատի առնել և գործնականորեն զնուհատել պատի լրագրերի և տեղական թերթերի բոլոր ցաւցմունքները՝ արտադրության ամեն մի հարաբուր բարելավումի մասին:

4. Աջակցել և ոգնել այդ որդաններին՝ նը-
րանց հետաքրքրություններ տալով:

5. Ակտիվորեն մասնակցել այն աշխա-
տանքին, վորի նպատակն է բանվորական մաս-
սայի առջև ճիշտ լուսաբանել մաժուլի հարուցած
արտադրական և տնտեսավարական հարցերը:

ԺՏԽ-ի ՆԱԽԱԳԱՀ Հ. ԲԱԼՅԱՆ

ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ

Տ. ԱԱՏՎԱԾԱՏՎՅԱՆ



Յ Ա Ն Կ

Խմբագրության կողմից

I. Բանթղթակիցները, պատի լրագրերի խմբկու-
ները յեվ զործարանային կազմակերպու-
թյունները .

II. Թե ինչպես պիտի կազմակերպել պատի թեր-
թի աշխատանքը .

III. Ինչպես կազմակերպել պատի թերթի խմբա-
գրական կոլլեգիայի աշխատանքները .

IV. Խմբակի աշխատանքի պլանը .

V. Պատի լրագրի յեվ բանթղթակիցների հասա-
րակայնացումը .

VI. Թերթի յեվ թղթակիցների խմբակի աշխա-
տանքի հաշվառումն ու հաշվառման ձեմերը .

VII. Բանթղթակիցների միջազգային կապը .

Հավելվածներ. I. Կուսակցության հեր-

թական խնդիրները բանգյուղթղթակցա-
կան շարժման ասպարիցում .

II. Հիմնական կանոններ բանթղթակիցնե-
րի ու զյուղթղթակիցների խմբակներ կազ-
մակերպելու յեվ նրանց աշխ. մասին .

III. Կանոններ զյուղթղթակիցների խմբակ-
ների կազմակերպման յեվ նրանց խնդիր-
ների մասին .

IV. Շրջաբերական ժողովնախորհի բոլոր
յինթակա ձեռնարկություններին .

Եջ
3

6

26

38

46

67

74


91

97

105

112

121





ԳԻՆԸ 40 ԿՈԴ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0143951

149-75